

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Պաքուի Կասկածելի Խաղերը

Երկար ամիսներ է ի վեր Երեւան եւ Պաքու կը փոխանակեն խաղաղութեան պայմանագրի շուրջ իրենց առաջարկները: Փաստաթուղթերու փոխանակումը առայժմ կը մնայ միակ ձեւը՝ վերջնական համաձայնութեան հասնելու ճանապարհին: Ատրպէյճանական կողմի առարկութիւններուն պատճառաւ առկախուած են պրիւքսէլեան եւ ուաշինկթընեան բանակցութիւնները, փոխարէնը Պաքու կ'առաջարկէ սահմանի վրայ երկկողմ բանակցութիւններու ձեւաչափը, որ ըստ երեւոյթին, անընդունելի է հայկական կողմին համար: Երեւան կը նախընտրէ միջազգային կառոյցներու երաշխաւորութիւնը՝ գոյանալիք որեւէ համաձայնութեան շուրջ:

Ատրպէյճանական կողմի հերթական առաջարկները եւ Իլ-համ Ալիեւի վերջին օրերու յայտարարութիւնները եկան յուսախաբութիւն եւ կասկած յառաջացնելու Պաքուի իսկական նպատակներուն շուրջ:

Արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեան յայտարարեց, որ նկատելի է որոշակի հետընթաց հակառակ կողմի առաջարկներուն մէջ: Փաշինեան աւելի յստակ արձագանգեց Ալիեւի վերջին օրերու խօսքերուն, ըսելով թէ Պաքուէն ինչո՞ղ յայտարարութիւնները լրջագոյն հարուած են խաղաղութեան գործընթացին:

Ալիեւ իր ելոյթին մէջ դարձեալ սկսած է յիշեցնել Նախիջեւանը բուն Ատրպէյճանին կապող «Չանգեզուրի միջանցքի» մասին, որ առաջին անգամ հրապարակ նետուեցաւ 44-օրեայ պատերազմէն ետք: Նման խօսակցութիւնները նկատելով կարմիր գիծ երկրի ինքնիշխանութեան հանդէպ, Երեւան առաջին օրէն իսկ մերժեց նման միջանցքի տրամադրումը: Այս պարագան վերջին երեք տարիներուն անցաւ մի քանի հանգրուաններէ: Ատրպէյճան նախ կը սպառնար զէնքի ուժով հասնիլ իր պահանջներուն եւ 2022-ի Սեպտեմբերին Ազերի բանակը փորձեց պատերազմի միջոցաւ պարտադրել միջանցքի ծրագիրը, սակայն բախելով Հայաստանի զինուած ուժերու դիմադրութեան, չկարողացաւ հասնիլ իր նպատակին: Հետագային Ատրպէյճանի բարձրաստիճան պաշտօնեաները սկսան յայտարարել, որ «Չանգեզուրի միջանցքը» կորսնցուցած է իրենց համար հետաքրքրութիւնը, քանի որ Իրանի հետ գոյացած է համաձայնութիւն՝ Նախիջեւանը Ատրպէյճանին կապող ճանապարհին շուրջ:

## Փաշինեան Պաքուի Յայտարարութիւնները Կը Համարէ Լրջագոյն Հարուած Խաղաղութեան Գործընթացին

«Վերջին օրերին Պաքուից հնչող յայտարարութիւնները համարուած են լրջագոյն հարուած խաղաղութեան գործընթացին», Գաւառի մէջ, կուսակիցներու առջեւ ելոյթ ունենալով, յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ ընդգծելով, որ ամենաբարձր մակարդակով Ատրպէյճանէն հնչող յայտարարութիւնները կը հակասեն ձեռք բերուած պայմանաւորուածութիւններուն:

«Առաջին տպաւորութիւնը այն է, որ, ի հեճուկս այս պայմանաւորուածութիւններէ, Ատրպէյճանը փորձում է տարածքային պահանջներ յառաջացնել Հայաստանի նկատմամբ, ինչն անընդունելի է», ըսաւ վարչապետը:

Խօսելով խախտուած պայմանաւորուածութիւններուն մասին՝ Փաշինեան ընդգծեց, որ սահմաններու սահմանազատումն ու սահմանազծումը պէտք է հիմնուած ըլլան 1991-ի Ալմաթիի հռչակագրին վրայ, այսինքն՝ նոր սահման ստեղծել պէտք է:

«Սահմանների սահմանազատման գործընթացը սահման ստեղծելու մասին է, սահմանազատման յանձնաժողովները պէտք է գնան ոչ



Նիկոլ Փաշինեան իր կուսակիցներու հետ հանդիպման ընթացքին

թէ սահման ստեղծեն, այլ պէտք է վերարտայայտեն, վերարտադրեն այն սահմանները, որոնք գոյութիւն են ունեցել 1991-ին Ալմաթիայի հռչակագիրը ընդունելու պահին», ըսաւ Փաշինեան:

«Ինչ պայմանով իրանը տրամադրուած է կապ Նախիջեւանի եւ Ատրպէյճանի միջեւ, նոյն պայմաններով մենք էլ ենք պատրաստ

տրամադրել էք կապը»

Անընդունելի համարելով Պաքուի կողմէ Հայաստանի նկատմամբ տարածքային պահանջներ յառաջացնելու փորձերը՝ Փաշինեան նաեւ Հայաստանի ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան նկատմամբ նկրտումներ որա-

## Թեմի Սելիտոնեան Նշանակուած է «Օսքարի» Գլխաւոր Տնօրէն

Ֆիլմարուեստի եւ Գիտութիւններու Ամերիկեան Ակադեմիան Թեմի Սելիտոնեանը նշանակած է «Օսքարի» գլխաւոր տնօրէն, որ նորաստեղծ պաշտօն է:

Այս մասին յայտնած է Ակադեմիայի գործադիր տնօրէն Պիլ Քրամերը: Նոր պաշտօնին Թեմի Սելիտոնեանը պիտի ղեկավարէ ռազմավարութիւնը, տաղանդներու հետ կապերը, շատուկ միջոցառումները եւ մրցանակաբաշխութեան բոլոր ծրագրերը եւ միջոցառումներու արտադրական խումբերը, ինչպէս կը փոխանցէ «Hollywood Reporter»-ը՝ այս մասին նշած է Քրամերը:

Սելիտոնեան սերտօրէն պիտի աշխատի «Օսքար»-ի արտադրողներու եւ հաղորդավարներու, Disney/ABC-ի եւ Ակադեմիայի ղեկավարութեան, ներառեալ՝ Կառավարիչներու Խորհուրդի եւ անոր յանձնաժողովներուն հետ, ինչպէս նաեւ պիտի համակարգէ այն խումբերուն աշխատանքը, որոնք ներգրուած են «Օսքար»-ի մրցանակաբաշխութեան արարողութեան մշակման եւ կազմման, ինչպէս նաեւ զայն համաշխարհային լայն լսարանին ներկայացնելու գործին մէջ:

Ակադեմիայի տնօրէնը՝ բարձր գնահատելով Սելիտոնեանի փորձը, ստեղծագործական անհատականութիւնն ու հեռանկարային ըլլալը, կարեւորած է այս պաշտօնը,



«Օսքարի» գլխաւոր տնօրէնի պաշտօնին նշանակուած Թեմի Սելիտոնեան

յատկապէս՝ «Օսքար»-ի 100-րդ մրցանակաբաշխութեան ընդառաջ: Քրամերի ղեկավարութեամբ՝ 2022 թուականին Սելիտոնեանը գլխաւորած է «Օսքար»-ի նորաստեղծ ռազմավարական ստորաբաժանումը, որ ամբողջ տարուան ընթացքին կ'աշխատէր մրցանակներու հետ կապուած բոլոր ծրագրերուն վրայ:

Սելիտոնեանը վերջերս «Օսքար»-ի ռազմավարութեան փոխնախագահն էր: Ան իր սկզբնական սպարէզը սկսած է 2005

## ԵՄ-ն Ատրպէյճանը Կը Զգուշացնէ Ծանր Հետեւանքներու Մասին՝ Հայաստանի Տարածքային Ամբողջականութեան Որեւէ Խախտման Պարագային

Եւրոպական Միութիւնը Ատրպէյճանին յստակ ուղերձներ կը փոխանցէ, որ այդ երկրին կողմէ Հայաստանի տարածքային ամբողջականութեան որեւէ խախտում անընդունելի է եւ ծանր հետեւանքներ պիտի ունենայ ԵՄ-Ատրպէյճան շարաբերութիւններուն վրայ:

Պրիւքսէլի մէջ «Արմէնիա»-ի թղթակիցի հարցումին ի պատասխան՝ այս մասին ըսած է ԵՄ արտաքին շարաբերութիւններու խօսնակ Փիթըր Սթանօն՝ անդրադառնալով Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի՝ Հայաստանի նկատմամբ տարածքային չափազանցութիւններու սպառնալիքներ պարունակող վերջին յայտարարութիւններուն:

«Մենք սերտ կապի մէջ եղած ենք Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարութեան հետ՝ առանց յոգնելու կրկնելով մեր աջակցութիւնը երկու երկիրներու ինքնիշ-

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ալիեւի ԹԻՒ Մեկ Գործընկեր Չայաստանեան Ընդդիմութիւնը Կրկին Խրախճանքի Մէջ Է

ՎՈՎԱ ՅԱԿՈՐԵԱՆ

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը շուրջ երկու ժամանոց ելոյթ է ունեցել, որում հերթական անգամ անուղղակիօրէն տարածքային պահանջներ է ներկայացրել Հայաստանին, նշել է, որ Ձերմուկը, Երեւանն ու Սիւնիքը պատմական ատրպէյճանական տարածքներ են, որ պատմական անարդարութիւն ու յանցագործութիւն է եղել, դրանք ժամանակին Հայաստանին են նուիրուել:

Նաեւ ճանապարհների ապաշրջափակմանն է անդրադարձել՝ նշելով, որ Ատրպէյճանից դէպի Ատրպէյճան (խմբ.՝ Նախիջևեան) մարդիկ եւ բեռները պէտք է անցնեն առանց որեւէ սահմանաչիւն կամ մաքսային ստուգման: Նաեւ ասել է, որ եթէ Ձանգեղուրի միջանցքը չբացուի, ապա իրենք էլ իրենց հերթին մտադիր չեն բացել Հայաստանի հետ սահմանը որեւէ այլ հատուածում:

«Հաղորդակցութիւնը պէտք է ապահովուի այդ երթուղով: Եթէ Հայաստանը մեր պայմանը չկատարի, ապա նա յաւերժ կը մնայ տարածաշրջանի փակուղին», - ասել է նա:

Ալիեւի այս լեքսիկոնը, վարքը նորութիւն չէ: Եւ հենց այս պատճառով է, որ Հայաստանի իշխանութիւնները նպատակ են դրել, որպէսզի բանակցութիւնների միջոցով ամրագրուի Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութիւնը եւ որ ստորագրուելիք փաստաթուղթն ունենայ

նաչ երաշխիքների յստակ մեխանիզմներ:

Իսկ ի՞նչ է առաջարկում Հայաստանեան ընդդիմութիւնը, որը պարբերաբար նշում է, որ Ատրպէյճանի հետ հնարաւոր չէ գնալ խաղաղութեան, քանի որ Ալիեւի նպատակը Հայաստանի հետ խաղաղութիւն ունենալը չէ:

Ասուածից հետեւում է, որ Հայաստանն էլ պէտք է առաջ չտանի խաղաղութեան օրակարգը, իսկ դրա այլընտրանքը պատերազմն է: Միաժամանակ, սակայն, ընդդիմութիւնը պնդում է, որ իրենց ասածը բնաւ պատերազմի մասին չէ:

Ի դէպ՝ ընդդիմութեան «սրացումները» ճիշտ եւ ճիշտ սկսում են Ալիեւի սրացումների հետ միաժամանակ: Եթէ նախկինում տպաւորութիւն էր, որ նրանք սպասում են, որ Ալիեւը նմանօրինակ յայտարարութիւններ անի, որպէսզի իրենք էլ ակտիւանան, ապա հիմա դա արդէն ոչ թէ տպաւորութիւն է, այլ՝ փաստ: Ընդդիմադիրները, կարծես, գիշեր-ցերեկ աղօթում են, որ Ալիեւը մի այսպիսի յայտարարութիւն անի, որ սկսեն նրա հետ սինխրոն հակահայաստանեան ու հակաիշխանական արշաւ իրականացնել:

Եւ ահա ընդդիմադիրները երեկուանից խրախճանքի մէջ են, մի խինդ, մի հրճուանք՝ իրենց լաւագոյն գործընկեր Ալիեւը հերթական առիթն է տուել:

Բայց վերադառնանք ընդդիմութեան առաջարկներին: Ի՞նչ պէտք է անել, եթէ չբանակցել

խաղաղութեան շուրջ: Ահա այդ հարցերին 3 կէտով պատասխանել է Ռոբերտ Քոչարեանի կրտսեր որդի, մարդկանց տուած մանդատը սեփական շահերին ծառայեցնող, «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Լեւոն Քոչարեանը:

Դէ առաջին կէտը պարզ է՝ իշխանութիւնների հեռացում: Որեւէ ընդդիմադիրի եթէ քնից հանես, հարցնես՝ ի՞նչ պէտք է անել, ի՞նչ քայլեր էք առաջարկում, ասում են՝ իշխանութիւնները պէտք է գնան: Այ իսկ դրանից լետոն սկսում է լղոզուել, կենացային տեքստեր հնչել:

Երկրորդ կէտով Լեւոն Քոչարեանն առաջարկում է վերակառուցելով յարաբերութիւնները դաշնակիցների հետ՝ լծուել գլուխներս գազանի երախից դուրս բերելուն եւ հզորանալուն: Ո՞ւմ նկատի ունի կրտսեր Քոչարեանը՝ դաշնակից ասելով: Բնականաբար Ռուսաստանին: Այն Ռուսաստանին, որը լինելով ՀՀ ռազմավարական դաշնակիցը՝ 2020-ի պատերազմի ընթացքում, ըստ հուլիսեան, չօգնեց Հայաստանին, որը Ատրպէյճանի հետ մէկտեղ «յաջող օպերացիա իրականացրեց» Ղարաբաղում: Այն Ռուսաստանին, որը Ատրպէյճանին յանձնեց Փառուխը, Խժաբերդը, Լաչինը եւ այլն: Այն Ռուսաստանին, որը չարձագանքեց Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ ատրպէյճանական յարձակումների ժամանակ: Այն Ռուսաստանին, որը ստացաւ Հայաստանի փոխանցած գումարը, բայց չմատակարարեց խոստացուած գէնքը:

Եւ ի վերջոյ այն Ռուսաստանին, որը ինքն էլ խնդիրներ ունի: Եւ ինչպէ՞ս ենք այդ Ռուսաստանի հետ հզորանալու, որ կարողանանք գլուխներս հանել գազանի երախից: Ի դէպ, սա նաեւ այն Ռուսաստանն է, որն, ըստ հուլիսեան, ռազմավարական դաշնակցային պայմանագիր ունի կնքած Ատրպէյճանի հետ, Եւրոպային դադ է մատակարարում Ատրպէյճանի միջոցով եւ այլն: Եւ հիմա Լեւոն Քոչարեանը պլանաւորում է այդ Ռուսաստանի հետ յարաբերութիւնները բարելաւելով հզորանալ ու... ու ի՞նչ անել: Ինչքա՞ն պէտք է հզորանալ, որպէսզի Ալիեւի պլանները Հայաստանի նկատմամբ փոխուեն:

Իսկ երրորդ բաժակով Լեւոն Քոչարեանն առաջարկում է աւելի ուժեղ դիրքերից բանակցել Ատրպէյճանի հետ:

Իսկ Սերժ Սարգսեանի կառավարման տարիներին պաշտպանութեան փոխնախարարի պաշտօնը զբաղեցրած Արտակ Չաքարեանն ասում է, թէ բազմիցս բացատրել են մեխանիզմները՝ իրավիճակից դուրս գալու համար, ու չի նշում, թէ որոնք են այդ մեխանիզմները: Բայց նախկինում ասել է՝ նոյն կենացները:

Աւելին՝ Չաքարեանը 2021-ին Նիկոյ Փաշինեանին քուէարկած քաղաքացիներին անուանել է կամ պարզապէս միամիտ եւ ծայրաստիճան անգրագէտ, կա՛մ ինչ-ինչ անձնական խնդիրներից դրդուած, գիտակցուած կամ անգիտակից եղանակով «ապագային, հակապետաւոր» Շարք էջ 6

Էլ Ի՞նչ Ապացոյց Է Պէտք, Մարիա Զախարովա

ՎԱՅՐԱՍ ԱԹԱՆԵՍԵԱՆ

ՄԱԿ-ում Ռուսաստանի Դաշնութեան մշտական ներկայացուցիչ Նեբեզնեան «ցեղասպանութիւն» է որակել Կազախի հատուածում ՀԱՄԱՍ-ի ռազմական ենթակառուցուածքների մաս կազմող թունեները ջրամոյն անելու իսրայէլի որոշումը: Իր տեսակէտը նա հիմնաւորել է ցեղասպանութեան կանխարգելման մասին Կոնվենցիայի այն դրոյթով, որ ցեղասպանութիւն է նաեւ էթնիկ խմբի համար բնակութեան պայմանների ոչնչացումը: Նա համարում է, որ իսրայէլը ձգտում է Կազան դարձնել բնակութեան համար ոչ պիտանի տարածք:

Նախօրէին ՌԴ ԱԳՆ պաշտօնական ներկայացուցիչը Հայաստանից ապացոյցներ է պահանջել, որ Ատրպէյճանը Լեւոնային Ղարաբաղում էթնիկ գտումներ է իրականացրել: Ինչո՞ւ պիտի Հայաստանը ապացոյցներ ներկայացնի, ոչ թէ՛ էթնիկ գտումների ենթարկուած արցախահայուցիւնը՝ ի դէմս իր ընտրեալ ներկայացուցիչների՝ պարզ է. Զախարովան ժամանակին է ասել, որ Արցախի նախագահի անուամբ անձի չի ճանաչում: Վերադառնանք Նեբեզնիայի ձեւակերպմանը կամ, աւելի ճիշտ՝ ցեղասպանութեան կանխարգելման Կոնվենցիայից նրա մէջբերմանը: Եւ ուրեմն, ցեղասպանութիւն է այն պետութեան քաղաքականութիւնը, որն ուղղուած է էթնիկ կամ կրօնական, կամ ռասայական որեւէ խմբի համար անտանելի կենսապայմանների ստեղծմանը, ինչի հետեւանք կարող է լինել այդ խմբի կամ ֆրիգիքական ոչնչացումը, կամ հարկադրական արտագաղթը: 2022թ. Մարտից մինչեւ 2023թ. Սեպտեմբեր Ատրպէյճանը հենց այդ պետական քաղաքականութիւնն էլ իրականացրել է՝ սկսելով կազի եւ էլեկտրականութեան մատակարարման խափանումներից, ապա՝ վերջնական անջատումից:

2022թ. Դեկտեմբերի 12-ին Ատրպէյճանը շրջափակել է Լեւոնային Ղարաբաղը, յաջորդ տարուայ Յունիսին՝ ենթարկել լիակատար պաշարման՝ արգելափակելով սննդամթերքի, դեղորայքի, հիգիենիկ պարագանների ներկրումը: Այլ ապրանքների մասին չենք խօսում: Առանց շինանիւթերի կամ կենցաղային տեխնիկայի ու գրեւորական պիտոյքների կարելի է ապրել, առանց հացի՝ ոչ: Ատրպէյճանը ստեղծել է Լեւոնային Ղարաբաղի հայ բնակչութեան համար բնականոն կեանքի ստանդարտներին անհամատեղելի պայմաններ: Անշուշտ եւ անառարկելիօրէն: Եւ դա արձանագրուած է Հաագայի դատարանի վճռով, ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի քննարկումներով, Կարմիր խաչի միջազգային կոմիտէի յայտարարութիւններով:

Նոյնիսկ եթէ ընդունենք, որ Սեպտեմբերի 19-ին Ատրպէյճանը ոչ մի բռնութիւն «չի գործադրել»՝ ինչպէս Զախարովան է կրկնում Իլհամ Ալիեւին, այլ միայն իր «ինքնիշխանութիւնն է վերահաստատել»՝ միեւնոյն է. Պաքուն Ստեփանակերտ է մտել ոչ թէ սննդամթերքի, դեղորայքի, հիգիենիկ պարագանների բեռնաշարասիւներով, այլ՝ զրահատեխնիկայով եւ ուժային կառուցների մոպիլ խմբերով եւ խաղաղ բնակչութեանը իրենց տներում հանգիստ մնալու պաշտօնական-հրապարակային ուղերձ չի յղել:

Զկայ, չէք գտնի ատրպէյճանցի որեւէ պաշտօնեայի տեսագրուած-տարածուած ուղերձ, կոչ, բնակչութեանը հասցեագրած թուղթիկ, ցուցապաստառ: Որպէս կանոն՝ նոյնիսկ սովերեն պետութեան մայրաքաղաք մտած օկուպացիոն զօրքի հրամանատարութեան առաջին գործը դա է՝ հաստատել կարգ ու կանոն, ապահովել խաղաղ բնակչութեան անվտանգութիւնը, հոգալ նրա սոցիալական առաջնահերթ կարիքները: Նման որեւէ գործողութիւն ոչ Ատրպէյճանն է կատարել, ոչ ռուսական զօրախմբի հրամանատարութիւնը: Այսինքն, Ատրպէյճանը հետեւողականօրէն կեանքի համար անտանելի պայմաններ է ստեղծել, այնուհետեւ դիմել բիրտ ուժի կիրառման, որպէսզի Արցախի խաղաղ բնակչութիւնը լքի իր տունը, հողը, հայրենիքը:

Ել ի՞նչ ապացոյց է պէտք, Մարիա Զախարովա: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Յրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր տեսակետները

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ  
ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ  
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆԱՎԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ  
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid at Pasadena CA.  
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Արմեն Աբազեանը Ազատուեցաւ Ու Կրկին Նշանակուեցաւ ԱԱԾ Տնօրէն

Արմեն Աբազեանը, ՀՀ նախագահին հրամանագրով, ազատուեցաւ ԱԱԾ տնօրէնի պաշտօնէն, վայրկեաններ անց արդէն, վարչապետին որոշմամբ, կրկին նշանակուեցաւ նոյն պաշտօնին:

Տեխնիկական այս փոփոխութեան պատճառը տարեվերջին «Ազգային անվտանգութեան մարմիններու մասին» օրէնքին մէջ կատարուած փոփոխութիւնն է, որուն ալ իր հրամանագրին մէջ յղում ըրած է նախագահ Վահագն Խաչատուրեանը:

Դեկտեմբերին ընդամէնը 24 ժամուան մէջ իշխանական պատգամաւորները փոփոխած էին օրէնքը, որով այսուհետեւ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան տնօրէնի պաշտօնը գինուորական ծառայութեան պաշտօն է եւ այդ պաշտօնին կը նշանակէ եւ կ'ազատէ բացառապէս վարչապետը:

Յունուար 9-էն ուժի մէջ մտած փոփոխութեան համաձայն, Ազգային Անվտանգութեան Ծառայութեան տնօրէնը հանրային պաշտօն գրադեցնող անձ է:



ԱԱԾ տնօրէն Արմեն Աբազեան

Փոփոխուած է նաեւ տեղակալներու կարգավիճակը. գինուորականին փոխարէն անոնք եւս կը համարուին հանրային պաշտօններ գրադեցնող անձեր եւ զանոնք կը նշանակէ եւ կ'ազատէ վարչապետը՝ ԱԱԾ ղեկավարին առաջարկութեամբ:

Արցախցիները, Որոնք Ունեցած Են Կենսաթոշակի Իրաւունք, Պիտի Վերականգնեն Իրենց Թոշակը

Լեռնային Ղարաբաղէն բռնի տեղահանուած քաղաքացիները, որոնք ունեցած են կենսաթոշակի իրաւունք, ելեկտրոնային հարթակով տուեալները լրացնելէ յետոյ պիտի վերականգնեն իրենց թոշակը:

Յունուար 10-ին տարեկան ամփոփիչ ասուլիսի ժամանակ ըսաւ ՀՀ աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարար Նարեկ Մկրտչեանը՝ ներկայացնելով Լեռնային Ղարաբաղէն բռնի տեղահանուած քաղաքացիներուն տրամադրուող աջակցութեան ծրագրերը:

«Մեզ համար կարեւոր հարցերից էր նաեւ Լեռնային Ղարաբաղից տեղահանուած մեր հայրենակիցներին կենսաթոշակներին եւ նպաստներին տրամադրուած, որ տեղ իրականացրինք օրէնքի փոփոխութիւն, ինչի արդիւնքում կառավարութեանը վերապահեց լիազօրութիւն, որպէսզի մենք կարողանանք այդ խնդիրը լուծել: Ըստ էութեան որոշուեց, որ բոլոր այն քաղաքացիները, որոնք մինչեւ տեղահանութիւնն ունեցել են կենսաթոշակի իրաւունք, կը ստանան կամ արդէն ստացել են իրենց թոշակը»:

շակը», ըսաւ Նարեկ Մկրտչեանը:

Լեռնային Ղարաբաղէն տեղահանուած քաղաքացիներու նպաստներու տրամադրման մասով նախարարը նշեց, որ 2024 թուականի Յունուար 9-ի դրութեամբ արդէն իսկ 135 անձի նշանակուած է երեխայի ծննդեան միանուագ նպաստ, 55 անձի՝ մայրութեան նպաստ եւ 165 անձի՝ մինչեւ 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ: Մկրտչեան նշեց, որ գործընթացը դեռ ընթացքի մէջ է:

«Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանուած քաղաքացիները կը սկսեն ստանալ նպաստները նոյն այն ժամանակահատուածում եւ այն նոյն տրամաբանութեամբ, ինչ ՀՀ նպաստառուները», ըսաւ ան:

Նախարարը ընդգծեց, որ այժմ կը գտնուին միջնաժամկէտ եւ երկարաժամկէտ ծրագրերու մշակման փուլին մէջ եւ Միասնական սոցիալական ծառայութեան աշխատակիցները կը շարունակեն աշխատանքներ տանիլ Լեռնային Ղարաբաղէն բռնի տեղահանուած քաղաքացիներու աւելի խոր քայլին կարիքներու գնահատման ուղղութեամբ:

Ազգային Ժողովը Ընդունեց 27 Տարին Լրացած Եւ Բանակէն Խուսափած Անձերուն Առնչուող Նախագիծը

ՀՀ Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջութեամբ ընդունեց «Քաղաքացիական Պայմանագիրէ խմբակցութեան պատգամաւոր Հայկ Սարգսեանի հեղինակած նախագիծը, որ կ'առնչուի 27 տարին լրացած եւ բանակէն խուսափած անձերու:

Նախագիծին կողմ քուէարկեց 61 պատգամաւոր, դէմ՝ 27, ձեռնպահ՝ 6:

Նախագիծով կ'առաջարկուի 27 տարին լրացած եւ պարտադիր զինուորական ծառայութիւն

շանցած քաղաքացիներուն տալ հնարաւորութիւն ազատելու քրէական պատասխանատուութենէ. առաջին՝ երկու տարի ծառայելով, երկրորդ՝ մէկ տարի ծառայելով եւ պետական պիտոճէ վճարելով 2,5 միլիոն դրամ, երրորդ՝ վեց ամիս ծառայելով եւ պետական պիտոճէ վճարելով 5 միլիոն դրամ, չորրորդ՝ մէկ ամիս ծառայելով եւ պետական պիտոճէ վճարելով 8 միլիոն դրամ, հինգերորդ՝ զինուորական ծառայութեան փոխարէն պետական պիտոճէ վճարելով 15 միլիոն դրամ:

Ոստիկաները Շահրամանեանին Ձգուչացուցած Են Որ Շարասիւնով Կարելի Զէ Երթեկէ

Ներքին գործերու նախարար Վահէ Ղազարեան մամլոյ ասուլիսի ժամանակ հաստատեց, որ պարեկային ոստիկանութեան աշխատակիցը կանգնեցուցած է Սամուէլ Շահրամանեանի շարասիւնը եւ տեղեկացուցած է, որ նման կարգով երթեկէկէլու իրաւունք չունի:

Հարցադրման ի պատասխան՝ Վահէ Ղազարեան ըսաւ՝ տեղեկ չէ, որ պարեկը Շահրամանեանին ըսած ըլլայ, թէ Հայաստանը Ղարաբաղ չէ, որ ինչպէս ուզէ՝ երթեկէ:

«Ես նման արտայայտութիւն չեմ լսել, որ որեւէ պարեկային ծառայող ասած լինի, նաեւ նման ցուցում չկայ: Տեղի ունեցածը եւ լրատուական կայքերից կարդացել եմ: Գիտեմ, որ շատ բարեկիրթ մտեցել է մեր ծառայողը եւ զգուշացել, որ շարասիւնով չի կարելի երթեկէկէլ: Եթէ այլ բան կայ՝ կը խնդրեմ աւելի մանրամասն ուսումնասիրեն եւ զեկուցեն», - ըսաւ նախարարը:



Ներքին գործերու նախարար Վահէ Ղազարեան

Ան նաեւ տեղեկացուցց, որ Հայաստանի մէջ շարասիւնով կ'երթեկէկէն միայն այն անձերը, որոնց այդ իրաւունքը տրուած է կառավարութեան որոշմամբ:

Տիրան Խաչատրեանը Կալանաւորուած Է

Երեւանի ընդհանուր իրաւասութեան քրէական դատարանի որոշմամբ՝ Գերագոյն Շտաբի պետի նախկին տեղակալ Տիրան Խաչատրեանը կալանաւորուած է:

Անոր նկատմամբ որպէս խափանման միջոց ընտրուած է երկամսեայ կալանքը:

Քննչական կոմիտէին հաղորդմամբ՝ Խաչատրեանի մասնակցութեամբ խուլիկանութեան գործով կայ եւս 4 անձ ձերբակալուած:

Յիշեցնենք՝ Խաչատրեանը մասնակից է Արամուս գիւղին մէջ գործող հացատան մէջ տեղի ունեցած գէնքի գործադրմամբ խուլիկանութեան:

Ըստ Քննչական կոմիտէին՝ Յունուար 11-ին՝ ժամը 22:45-ի սահմաններուն մէջ, Կոտայքի մարզի Արամուս գիւղին մէջ գործող «Էրիկի մօտ» հացատան բակին մէջ վիճաբանութիւն ծագած է շուրջ տասնեակ անձերու միջեւ: Այդ ընթացքին անոնք փոխադարձ հարուածներ հասցուցած են միմեանց՝ զուգորդուած փոխադարձ հայցոյան քննքով, իսկ վիճաբանութեանը:



Գերագոյն Շտաբի պետի նախկին տեղակալ Տիրան Խաչատրեան

Թեան մասնակից Տիրան Խաչատրեանը, շարունակելով խուլիկանական գործողութիւնները, իր մօտեղած հրագէնէն կրակոց արձակած եւ մարմնական վնասուածք պատճառած է տեղի բնակիչին:

Յանցագործութիւններու Թիւր Աճած Է 5,3 Տոկոսով, Բացայայտուած Է 65 Տոկոսը

2023 թուականի 11 ամիսներուն Հայաստանի մէջ յանցագործութիւններու ընդհանուր թիւը 2022 թուականին համեմատ աճած է 5,3 տոկոսով կամ 1771 դէպքով: Մամուլի ասուլիսի ժամանակ այս մասին ըսած է Ոստիկանութեան պետ, Ներքին գործերու նախարարութեան փոխնախարար Արամ Յովհաննիսեանը՝ ներկայացնելով նախորդ տարուայ 11 ամիսներուն երկրին մէջ արձանագրուած յանցագործութիւններուն վիճակագրութիւնը:

«2022 թուականի 11 ամիսներին ընթացքում գրանցուել է 33 հազար 281 դէպք, իսկ 2023 թուականի 11 ամիսներին ընթացքում 35 հազար 52: Սպանութիւնները 2022-ի համեմատ նուազել են 7-ով, խարդախութեան դէպքերն աւելացել են 342-ով, ճանապարհային երթեկէկէլութեան կանոնները խախտելու դէպքերի աճը կազմել է 226:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառութիւնն աւելացել է 2354 դէպքով, գէնքի, ռազմամթերքի ապօրինի շրջանառութիւնը՝ 300-ով, կաշառքի աճը՝ 340-ով», ըսաւ Յովհաննիսեան:

Արամ Յովհաննիսեան ներկայացուց նախորդ տարուայ ընթացքին արձանագրուած յանցագործութիւններու բացայայտման ցուցանիշը:

«2023 թուականի 11 ամիսներին ընթացքում գրանցուած 35 հազար 52 յանցագործութեան դէպքերից 65 տոկոսը բացայայտուել է եւ յայտնի է յանցակազմ կատարած անձանց ինքնութիւնը», ասուլիսի ժամանակ ըսաւ Յովհաննիսեան:

2023 թուականի 11 ամիսներու ընթացքին արձանագրուած է 4368 ճանապարհային պատահար, զոհուած է 362 մարդ, վիրաւորուած 6200 հոգի: Դէպքերը 2022 թուականին համեմատ աւելցած են 258-ով:

# ԼՈՒՐԵՐ

## Մօտ Ապագային Ատրպեյճանը Դուրս Պիտի Գայ ՀՀ Բռնագրաւուած Տարածքներէն. Անդրանիկ Քոչարեան

ՀՀ Ազգային Ժողովի Պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեան կը կարծէ, որ Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւի ամէն ըսածին պէտք է լուրջ վերաբերել. «Եթէ նոյնիսկ ասում է իր ներքին լսարանի համար, էլի պէտք է լուրջ վերաբերուենք, մեր խնդիրը մեր երկրի ամբողջիւններն ամրապնդելն ու ուժեղացնելը պէտք է լինի»:

Ընտ պատգամաւորին՝ Հայաստանի անվտանգային համակարգի ուժեղացումը Ատրպեյճանին պիտի ստիպէ ետ երթալ: «Ամէն օր պէտք է արթնանալ ու կատարել այն խնդիրները, որոնք ուժեղացում են մեր երկրի անվտանգութիւնը, ըսաւ ան: Քոչարեան վստահ է՝ մօտ ապագային Ատրպեյճանը դուրս պիտի գայ ՀՀ բռնագրաւուած տարածքներէն, բայց նախ պէտք է փորձել խողով ճանապարհով անոր հասնել:

Անդրադառնալով հարցին, որ Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւ եւ կը փափաքի, որ Հայաստանն ու Ատրպեյճանն ուղիղ բանակցին, իսկ խողովութեան պայմանագիրը կնքուի առանց երաշխաւորներու, Քոչարեան պատասխանեց, որ շատ գայթակղիչ առաջարկ է:

«Ինքն ասում է՝ չլինեն միջազգային երաշխաւորներ, բա միջազգային հարթակներն ինչի՞ համար են, որ այդ երաշխաւորութիւններն ամրագրուեն բնագրով եւ դրանից բխող գործողութիւններով:

«Ինքն ասում է՝ չլինեն միջազգային երաշխաւորներ, բա միջազգային հարթակներն ինչի՞ համար են, որ այդ երաշխաւորութիւններն ամրագրուեն բնագրով եւ դրանից բխող գործողութիւններով:

## Խորհրդարանը Ընդունեց Պատուաւոր Կոչումներու Չեղարկման Նախագիծը

Հայաստանի մէջ կը վերացուի պատուաւոր կոչումներու շնորհումը: «Հայաստանի Հանրապետութեան պետական պարգեւներու եւ պատուաւոր կոչումներու մասին Հայաստանի Հանրապետութեան օրէնքին մէջ փոփոխութիւններ կատարելու մասին եւ խորակից օրէնքներուն մէջ փոփոխութիւններու փաթեթը Ազգային Ժողովի նիստին ընդունուեցաւ առաջին ընթացքով՝ ստանալով 64 կողմ, 31 դէմ ձայներ:

Այս պահին գործող օրէնսդրութեամբ սահմանուած են 17 պատուաւոր կոչումներ, որոնց մէջ են Ժողովրդական արտիստի, Ժողովրդական նկարիչի, արուեստի վաստակաւոր գործիչի, մշակութի վաստակաւոր գործիչի, վաստակաւոր լրագրողի եւ այլ կոչումներ: Նախագիծով կ'առաջարկուի չեղարկել պատուաւոր կոչումները: Կը մնայ միայն «վաստակաւոր կոչելու» կոչումը, քանի որ ոչ թէ անհատին, այլ հաւաքական անձնակազմին կը տրուի: Նախապէս տրուած կոչումները պիտի շարունակեն գործել:

Ըստ նախագիծի հիմնաւորման՝ կոչումները ժամանակավորէպ են, առողջ մրցակցութեան, նոյնիսկ բարոյահոգեբանական մթնոլորտի վրայ բացասաբար



ԱՎ Պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեան

ներով: Երաշխիքները պէտք է ինչոր ուժեր պահպանեն», նկատեց պատգամաւորը:

Պաշտպանութեան յանձնաժողովի նախագահին խօսքով՝ հակառակորդ պետութեան ղեկավարը կրնայ շատ պահանջներ ներկայացնել եւ ցանկութիւններ յայտնել, խնդիրը, սակայն, այն է, որ մենք այդ ցանկութիւնները կանխելու հնարաւորութիւն ստեղծենք:

Նշենք, որ Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւը նախօրէին յայտնած է, որ խողովութեան պայմանագրին մէջ երաշխաւորներ պէտք չեն. «Մա պիտի ըլլայ երկու ինքնիշխան պետութիւններու կողմէ ստորագրուած պայմանագիր:

անդրադարձող: Նախագիծը ներկայացուցած Արդարադատութեան նախարարութիւնը մատնանշած է յառաջադէմ երկիրներու փորձը, ուր պատուաւոր կոչումներու հիմնարկ առկայ չէ:

Արդարադատութեան փոխնախարար, նախագիծը գեկուցող Արմէնուհի Յարութիւնեանը նախագիծին առնչութեամբ ըսած է, որ առաւելապէս խորհրդային ժառանգութիւն հանդիսացող կոչումներէն ժամանակն է հրաժարիլ, քանի որ «Ժողովրդականութիւնը հասկացութիւնը չափելի եւ որեւէ ճշգրիտ չափանիշով գնահատելի չէ, ինչի պատճառով ակնյայտ է, որ որեւէ ստեղծագործողի Ժողովրդականութիւնը, հանրային ճանաչելիութիւնը, անոր կերպարին եւ կամ գործունէութեան հանրային ընկալումը չի կրնար ստուգուիլ կամ չափուիլ, ոչ ալ վաւերացուիլ կամ մերժուիլ պետական որեւէ մարմինի կողմէ:

Նախարարութեան կը վստահեցնեն՝ պատուաւոր կոչումներու չեղարկումը չի նշանակեր, որ պետութիւնը պիտի դադրի որեւէ մէկը խրախուսելի իր գործունէութեան համար, պիտի ըլլան ոլորտային մրցանակաբաշխութիւններ:

## «Խաղաղութեան Խաչներուկը» Յստակօրէն Կը Մատնանշէ Ապաշրջափակման Գործընթացը. ՀՀ ԱԳՆ

«Խաղաղութեան Խաչներուկը» նախագիծի յայտնի չորս սկզբունքները յստակօրէն կը մատնանշեն, թէ ինչպէս պէտք է տեղի ունենայ տարածաշրջանի տնտեսական եւ հաղորդակցային կապուղիներու ապաշրջափակման գործընթացը, «Ազատութեան» հարցին ի պատասխան փոխանցած են Հայաստանի Արտաքին գործերու նախարարութեան:

Յունուարի սկիզբը, գերմանական «Berliner Zeitung»-ին տուած հարցազրոյցին, Ատրպեյճանի նախագահի խորհրդական Հիքմետ Հաճիբե, խօսելով Նախիջեւանի հետ ցամաքային կապի սահմանային եւ մաքսային կարգին մասին, ըսած էր, որ Ատրպեյճանը պատրաստ է քննարկելու «Քալինինկրատի տարբերակը»:

«Ազատութիւն»-ը, մասնաւորապէս, հետաքրքրուած էր Արտաքին գործերու նախարարութեան, թէ արդեօք քննարկուած է այս առաջարկը եւ ի՞նչ դիրքորոշում ունի պաշտօնական Երեւանը այս հարցին:

Արտաքին գործերու նախարարութեան նշած են, թէ Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ ընթացող բանակցութիւններու շրջանակներուն մէջ կողմերը միմեանց կը ներկայացնեն տարբեր հարցեր, այդ շարքին՝ նաեւ տարածաշրջանի տնտեսական եւ հաղորդակցային կապուղիներու ապաշրջափակման շուրջ տարբեր պատկերացումներ, գաղափարներ եւ մօտեցումներ՝ առանց յստակացնելու այնուամենայնիւ այդ հարցը քննարկուած է, թէ՞ ոչ:

Ըստ Հաճիբեի մատնանշած տարբերակին՝ Ռուսաստանի քաղաքացիները իրաւունք ունին Լիթուանիոյ ցամաքային տարածքով Քալինինկրատին հասնիլ Ռուսաստան՝ յատուկ տարանցման փաստաթուղթով. այս պարագային Ռուսիոյ քաղաքացիներուն անհրաժեշտ չէ Շենկէնեան վիզա ունենալ: Այս համաձայնութիւնը ձեռք բերուած է Մոսկուայի ու ԵՄ-ի միջեւ՝ 20 տարի առաջ:

Դեկտեմբերին Պաքուի մէջ տեղի ունեցած համաժողովին Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւ ըսած էր, որ Ատրպեյճանին պէտք է դիւրին մուտք Նախիջեւան, առանց սահմանին մաքսային խոչընդոտներու, ստուգումներու կամ ընթացակարգերու:

Ան նաեւ ըսած էր, որ Պրիւքսէլի մէջ Նիկոլ Փաշինեանի հետ այդ հարցերը քննարկելու ժամանակ անդրադարձ եղած է Ռուսաստանի եւ Քալինինկրատի երկաթուղային գիծի փորձին, սակայն Հայաստանը հրաժարած է անկէ:

## Մոսկուան Ապակառուցողական Կ'որակէ Ռուս Խաղաղապահներու Հասցէին Հայաստանէն Հնչող Մեղադրանքները

Մոսկուան ապակառուցողական կ'որակէ Ռուս խաղաղապահներու հասցէին Հայաստանէն հնչող մեղադրանքները եւ փաստերը շահարկելու փորձերը:

Այս մասին յայտնած է Ռուսիոյ Արտաքին գործերու նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Չախարովան:

«Մենք կը տեսնենք այդ յայտարարութիւնները, զանոնք կը համարենք ապակառուցողական, ամենակարեւոր՝ իրականութեան հիմնապատասխանող», ըսած է Չախարովան:

Ռուսաստանցի դիւանագէտը նաեւ յաւելած է, որ Հայաստանի նման յայտարարութիւնները «փաստերը կեղծելու փորձեր են», որուն նպատակը «պատասխանատուութեան խուսափելն է»:

Ռուսիոյ Արտաքին գործերու նախարարութեան ներկայացուցիչը չէ յստակացուցած, թէ Ռուս խաղաղապահներու հասցէին Հայաստանէն հնչող որ մեղադրանքներն են «կեղծ»:



Ռուսիոյ Արտաքին գործերու նախարարութեան բանբեր՝ Մարիա Չախարովա

Հայաստանի իշխանութիւնները Ռուս խաղաղապահները կը մեղադրեն Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը չպաշտպանելու համար:

## Պաքուն Փարիզը Կը Մեղադրէ Իր Ներքին Գործերուն Խառնուելու Մէջ

Պաքուն Փարիզը կը մեղադրէ Ատրպեյճանի ներքին գործերուն խառնուելու մէջ եւ կոչ կ'ընէ դադրեցնելու այդ քայլերը: Այս մասին յայտնած է Ատրպեյճանի ԱԳՆ-ի խօսնակ Այխան Հաճիգատին:

Ատրպեյճանի դիւանագիտական գերատեսչութեան խօսնակի յայտարարութիւնը կը հնչէ ի պատասխան Փարիզի քննադատութեան. Ֆրանսայի կառավարութիւնը, մասնաւորապէս, պնդած է, որ Ատրպեյճանի մէջ լրտեսութեան մեղադրանքով Ֆրանսայի քաղաքացի Մարթին Ռա-

յանի կալանքը «կամայական» է: «Այս անհիմն յայտարարութիւնը իրականութիւնը խեղաթիւրելու եւ Ատրպեյճանի ներքին գործերուն միջամտելու եւս մէկ փորձ է», յայտնած է Հաճիգատին:

Փարիզի եւ Պաքուի միջեւ դիւանագիտական լարուածութիւնը սրած է անցեալ ամիս, երբ Ատրպեյճանի իշխանութիւնները երկրէն արտաքսեցին երկու ֆրանսացի դիւանագէտ: Ի պատասխան՝ Ֆրանսան իր հերթին արտաքսեց Ատրպեյճանական դեսպանատան երկու աշխատակից:

### Նախագահ Խաչատուրեանի Հանդիպումը Ձուկցերիոյ Հայ Համայնքին Հետ



Նախագահ Վահագն Խաչատուրեան Ձուկցերիոյ հայկական համայնքի շարք մը ներկայացուցիչներուն հետ

Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրեան Ձուկցերիոյ հայկական համայնքի շարք մը ներկայացուցիչներուն հետ:

Նախագահը ներկայացուց Խաչատուրեանի մասնաճյուղի ղեկավարները և հայաստանի ներքին ու արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքներուն ու ելակետերուն, ընդհանուր իրողություններուն վերաբերեալ:

Իր խօսքին մէջ նախագահ Վահագն Խաչատուրեան անդրադարձած է հարակից վկայական տարածաշրջանի զարգացումներուն, հարեւաններու հետ յարաբերություններուն մէջ առկայ իրադրություններուն: Այս առումով նախագահը ներկայացուցած է Հայաստանի մտայնացումներն ու դիրքորոշումները՝ տարածաշրջանին մէջ կայուն եւ տեւական խաղաղութեան հասնելու, հարեւաններուն եւ գործընկերներուն հետ փոխկապակցութեան միջոցով ու փոխաշնորհաբար համագործակցութեան ձեւաւորելու հեռանկարներուն վերաբերեալ:

Հանդիպման ընթացքին նա-

խագահ Վահագն Խաչատուրեան անմիջական միջոցառումներու մասին համայնքի ներկայացուցիչներուն հետ, պատասխանած է անոնց հետաքրքրող հարցումներուն:

Հայաստանի նախագահը մասնաճյուղի ղեկավարներուն հետ անմիջական կապերի մէջ առկայ զարգացումներուն, երկրի պաշտպանականության բարձրացման ուղղութեամբ իշխանութիւններու եւ կառավարութեան ձեռնարկած քայլերուն ու ժողովրդավարական բարեփոխումներու իրականացման վերաբերեալ:

Նախագահը իր խօսքին մէջ անդրադարձած է Լեռնային Ղարաբաղի բռնի տեղահանումներու ընկերային եւ մարդասիրական խնդիրներու լուծման ուղղութեամբ Հայաստանի կառավարութեան միջոցառումներուն ու ծրագրերուն եւ պատասխանելով ներկաներու հարցումներուն նշած է հայաստանեան իշխանութիւններուն կողմէ որդեգրուած այն հիմնական ուղղութիւններն ու սկզբունքները, որոնք դրուած են տեղահանումներուն հիմնախնդիրներու ամբողջական լուծման հասնելու պատկերացումներու հիմքին:

### ԼՂ Հակամարտութեան Տուժած Բոլոր Անձերու Իրաւունքներու Արդիւնաւէտ Պաշտպանութիւնը Խաղաղ Գործընթացի Յաջողութեան Բանալին Է. Միյաթովիչ

«Հայաստանի եւ Ատրպէյճանի իշխանութիւնները իրենց խաղաղ բանակցութիւններուն մէջ պէտք է կեդրոնանան մարդու իրաւունքներու պաշտպանութեան վրայ եւ հակամարտութեան տուժած բոլոր անձերուն համար հաստատեն մարդու իրաւունքներու կայուն երաշխիքներ», ըսած է Եւրոպայի Խորհուրդի մարդու իրաւունքներու յանձնակատար Տունիա Միյաթովիչը՝ հրապարակելով իր դիտարկումները 2023 թուականի Հոկտեմբեր 16-23-ին Հայաստան, Ատրպէյճան եւ Լեռնային Ղարաբաղ այցէն յետոյ: Տասնամեակներու ընթացքին առաջին անգամ էր, որ նման իրաւապաշտպան առաքելութիւնը կրցաւ այցելել ԼՂ:



Եւրոպայի Խորհուրդի մարդու իրաւունքներու յանձնակատար Տունիա Միյաթովիչ

մէջ ապաստան գտած ԼՂ հայերուն եւ, մասնաւորապէս, խոցելի խումբերու պատկանողներուն, պէտք է երաշխաւորուի անհրաժեշտ աջակ-

### Ֆրանսական «Mezzo» Հեռուստաալիքը Պիտի Յուլցարդի Հայաստանի Պետական Սիմֆոնիկ Նուագախումբին Համերգները



Հայաստանի Պետական Սիմֆոնիկ Նուագախումբը՝ Ելոյթներն Ընթացքին

Ֆրանսական հեղինակաւոր «Mezzo» հեռուստաալիքի հետ Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբի համագործակցութեան բերումով մինչեւ 2024 թուականի Փետրուար 1-ին «Mezzo»-ի եթերով պիտի ցուցադրուին Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբի համերգներու տեսագրութիւններ, կը տեղեկացնեն Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբի մամուլի ծառայութիւնէն:

«Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբը, հաւատարիմ իր առաքելութեանը, արտասահմանեան լսարանին է ներկայացնում հայ երաժշտահանական արուեստը: Համերգների ծրագրերում կը հնչեն Արամ Խաչատրեանի,

Աւետ Տէրտէրեանի, Էդուարդ Բաղդասարեանի, Աննօ Բաբաջանեանի, Ալեքսանդր Յարութիւնեանի եւ այլ երաժշտահանների ստեղծագործութիւններ», կ'ըսուի հաղորդագրութեան մէջ:

Պիտի շարունակէ ցուցադրուել նաեւ «Արամ Խաչատրեան» մշակութային հիմնադրամի ու ԿԳՄՄ նախարարութեան նախաձեռնութեամբ եւ «Mezzo» հեռուստաալիքի նկարահանած փաստագրական ֆիլմը՝ նուիրուած Արամ Խաչատրեանի 120-ամեակին:

Համերգները եւ ֆիլմը հնարաւոր է դիտել՝ հետեւելով կայքին մէջ տեղադրուած ժամանակացոյցին՝ <https://www.mezzo.tv/en/Khachaturian-12378>:

ցութեան հասանելիութիւն անմիջական, միջնաժամկէտ եւ երկարաժամկէտ հեռանկարի մէջ: «Եւրոպայի Խորհուրդի անդամ երկիրները պէտք է կեդրոնանան ֆինանսական աջակցութեան վրայ, ապահովեն, որ տեղահանումներու եւ զանոնք ընդունող բնակչութեան մարդասիրական կարիքները լիովին բաւարարուին», աւելցուցած է յանձնակատարը:

Միյաթովիչ ընդգծած է, որ Հայաստանի մէջ վերջերս տեղահանուած ԼՂ հայերուն պէտք է հնարաւորութիւն տրուի վերադառնալու ապահով եւ արժանապատիւ, նոյնիսկ եթէ այդ ենթադրական կը թուի այս պահուն, ներառեալ ձկուն լուծումներ գտնելու միջոցով, մասնաւորապէս՝ կապուած անոնց քաղաքացիութեան եւ իրաւական կարգավիճակի հետ: «Մինչ հնարաւոր վերադարձը, պէտք է անյապաղ ուղիներ գտնել, այդ շարքին՝ անվտանգութեան երաշխիքներ հաստատելով, որ դարբաղցի հայերը ժամանակաւորապէս մուտք գործեն իրենց տունները կամ սովորական բնակութեան վայրերը եւ այցելեն զերեզմաններ, ուր թաղուած են հարազատները: Ատրպէյճանի իշխանութիւններուն պարտականութիւնն է ապահովել, որ դարբաղցի հայերուն թողած ունեցումները պաշտպանուած ըլլայ թաւանի, գողութիւնէ կամ զաւթումէ: Այն սակաւթիւ հայերը, որոնք մնացած են Ղարաբաղի տարածաշրջանին մէջ, նոյնպէս պէտք է օգտուին մարդու իրաւունքներու պաշտպանութենէն, այդ շարքին՝

ազատ տեղաշարժի իրաւունքին», նշած է Միյաթովիչ:

«Միջազգային մարդասիրական իրաւունքի խախտման եւ հակամարտութեան հետ կապուած մարդու իրաւունքներու լուրջ խախտումներու մասին բոլոր մեղադրանքները պէտք է արդիւնաւէտ եւ անյապաղ հետաքննուին, մեղաւորները պատասխանատուութեան ենթարկուին արդար, անկախ եւ անաչառ դատավարութենէ յետոյ: Այդ կը ներառէ մեղադրանքներ՝ կապուած Լաչինի միջանցքի արգելափակման հանգամանքներու, դարբաղցի հայերու զանգուածային տեղահանման եւ Սեպտեմբեր 19-20-ի ռազմական գործողութեան հետ», ըսած է յանձնակատարը:

Տունիա Միյաթովիչի դիտարկումներուն մէջ արծարծուած մարդու իրաւունքներու վերաբերեալ այլ հարցերը կը ներառեն մարդիկը ականներէ եւ պատերազմէ մնացած պաշտպաններէ պաշտպանելու անհրաժեշտութիւնը, հակամարտութեան պատճառով ձերբակալուած անձերու վիճակը, ներառեալ անոնց կալանքի պայմաններն ու ընտանիքներու հետ շփման մակարդակը, հակամարտութեան ընթացքին անյայտ կորսուածներու ճակատագիրը պարզելու եւ անոնց ընտանիքներուն պատասխաններ տալու կարեւորութիւնը: Ի վերջոյ, յանձնակատարը երկու երկիրներու իշխանութիւններուն կողմէ ըրած է պայքարելու ատելութեան խօսքի դէմ եւ խթանելու փոխըմբռնումն ու վստահութիւնը:

# Փաշինեան Պաքուի Յայտարարութիւնները

Շարունակուած էջ 1-էն

կեց «Ձանգեգուրի միջանցքի» մասին Ալիեւի յայտարարութիւնները:

«Որպէսզի այս բառային խաղերից դուրս գանք, մենք ի՞նչ ենք ասում՝ ասում ենք՝ ինչ պայմանով իրանի իսլամական Հանրապետութիւնը տրամադրում է կապ Նախիջեւանի եւ Ատրպէյճանի միւս հատուածի միջեւ, նոյն պայմաններով մենք էլ ենք պատրաստ տրամադրել էլ կապը՝ ե՛ւ երկաթուղային, ե՛ւ ավտոճանապարհային», ըսաւ վարչապետը:

Նիկոլ Փաշինեանը եւս մէկ անգամ վերահաստատեց Հայաստանի դիրքորոշումը՝ ճանապարհները եւ սահմանները պէտք է բացուին, բայց հիմնուելով երկիրներու տարածքային ամբողջականութեան, ինքնիշխանութեան եւ իրաւագորութեան սկզբունքներու վրայ:

«Ընդ որում, Ատրպէյճանն ասում է՝ մենք ուզում ենք անխոչընդոտ տեղաշարժ: Մենք դէմ չենք անխոչընդոտ տեղաշարժին, բայց անխոչընդոտ տեղաշարժը չի նշանակում օրէնսդրութեան շրջանցմամբ տեղաշարժ», ըսաւ Փաշինեան:

Արձագանգելով Ալիեւի այն պնդումներուն, թէ Հայաստանը 2020-ի Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեամբ պարտաւորուած է անխոչընդոտ կապ տրամադրել Ատրպէյճանին, Փաշինեան հակադրեց՝ այդ եռակողմ յայտարարութեան կողմերէն երկուքը, փաստաթուղթի ստորագրման պահին սկսեալ մինչեւ 2023 թուականի Սեպտեմբերը ինկած ժամանակահատուածին, իրենց գործողութիւններով ցոյց տուած են, որ այդ փաստաթուղթը այլեւս գոյութիւն չունի:

«Այն գործողութիւնները, որ ձեռնարկուել են Լեռնային Ղարաբաղում, ընդ որում Ռուսաստանի Դաշնութեան եւ Ատրպէյճանի մասնակցութեամբ, դա վկայութիւնն է այն բանի, որ իրենց համար այդ փաստաթուղթը գոյութիւն չունի: Ձի կարող այդպէս լինել, որ երկու կողմի համար այդ փաստաթուղթն այլեւս չկայ, երրորդ կողմի համար էլ փաստաթուղթը շարունակի գոյութիւն ունենալ: Եւ չետոյ Ատրպէյճանից ինչ են ասում, ասում են՝ Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան մէջ մենք հասանք նրան, որ արձանագրուի, այսպէս կոչուած, «Ձանգեգուրի միջանցք» եւ որ Ռուսաստանի Դաշնութիւնն է ապահովելու այդ ճանապարհների անվտանգութիւնը: Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան մէջ էլ երկուսից ոչ մէկը չկայ գրած: Ոչ մի տեղ գրած չէ, որ ՌԴ-ն Հայաստանի որեւէ տարածքում կապուողիների անվտանգութիւն պէտք է ապահովի: Էլ չեմ ասում Ատրպէյճանը արդէն երեք տարի «Ձանգեգուրի միջանցքի» մասին խօսելի է գարգացնում՝ յղում անելով Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան վրայ: Ով «Ձանգեգուրի միջանցք» արտայայտութիւն կը գտնի Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան մէջ, խոստանում եմ դրամական պարգեւ», յայտնեց Գործադիրի ղեկավարը:

Ալիեւը Հայաստանէն պահանջած էր վերադարձնել «բռնագրաւուած ութ գիւղերը», նշելով, որ մշտապէս կը քննարկէ այդ հարցը Հայաստանի վարչապետին

հետ:

«Հայաստանն էլ բարձրացնում է 32 գիւղերի հարցեր, որոնց կենսական նշանակութեան տարածքներն բռնագրաւուած են, այդ թւում՝ Գեղարքունիքի մարզում: Մենք քանի որ հաւատարիմ ենք Ալմա-աթիի հռչակագրի հիման վրայ փոխադարձաբար միմեանց տարածքային ամբողջականութիւնը ճանաչելուն, մենք ի՞նչ ենք ասում, ասում ենք՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ բռնագրաւուած տարածքներ պէտք է չլինեն, հետեւաբար այնտեղ, որտեղ պարզուի, որ Հայաստանն է ինչ-որ տարածքներ հսկողութեան տակ պահում, որը տէ իւրէ պատկանում է Ատրպէյճանին, Հայաստանը պէտք է այդ տարածքներից դուրս գայ, իսկ այն տարածքները, որոնք տէ իւրէ պատկանում են Հայաստանին եւ Ատրպէյճանին է պահում տիրապետութեան տակ, Ատրպէյճանը պէտք է դուրս գայ: Բայց սա գործնականում հնարաւոր չէ իրագործել՝ առանց փոխադարձ համաձայնեցումած քարտէզի, որովհետեւ ինչպէ՞ս որոշենք՝ էս տարածքը Հայաստանի տարածքն է, թէ՛ Ատրպէյճանի: Դրա համար մի ձեւ կայ՝ քաղաքական առումով յենուել 1991 թուականի Ալմա-աթիի հռչակագրի վրայ», ըսաւ Փաշինեան:

Նիկոլ Փաշինեան հակադրեց նաեւ Հայաստանի կողմէ Ֆրանսայէն կամ Հնդկաստանէն գէնք ձեռք բերելու շուրջ Պաքուէն հնչող քննադատութիւններուն, պնդելով՝ որեւէ երկիր ունի բանակ ունենալու իրաւունք եւ ոչ ոք կրնայ այդ կասկածի տակ դնել:

Ըստ Հայաստանի վարչապետին՝ կողմերուն մտահոգութիւնները փարատելու համար պէտք է խաղաղութեան այնպիսի պայմանագիր կնքել, որ կը կանխէ պատերազմի հնարաւորութիւնը:

«Բայց երբեմն Ատրպէյճանի առաջարկներին ծանօթանալով, տպաւորութիւն ենք ստանում, թէ փորձ է արւում ստեղծել մի փաստաթուղթ, որով պէտք է օրինակացուի հետագայ պատերազմները: Սա տրամաբանութիւնից դուրս է», եզրափակեց Փաշինեան:

# Պաքուի Կասկածելի Խաղերը

Շարունակուած էջ 1-էն

Այժմ, Պաքու դարձեալ սկսած է խօսիլ «Ձանգեգուրի միջանցքի» մասին յայտարարելով թէ, այդ միջանցքը պէտք է անարգել երթելու իր քաղաքացիներուն համար, այլապէս Հայաստանի հետ սահմանը չի կրնար բացուիլ որեւէ այլ կէտի վրայ: Այսինքն, Հայաստան պիտի շարունակէ մնալ շրջափակուած, բնականաբար նոյնը պիտի ընէ նաեւ Թուրքիան, անտեսելով Հայաստան-Թուրքիա բանակցութիւններու ընթացքին գոյացած մասնակի համաձայնութիւնները: Ալիեւ կը շարունակէ պնդել, որ «միջանցքը» նախատեսուած է 44-օրեայ պատերազմի ավարտին ստորագրուած եռակողմ յայտարարութեամբ: Այս կապակցութեամբ Փաշինեան յիշեցուց, որ Ատրպէյճանն ու Ռուսաստանը երբ խախտեցին համաձայնութեան Լեռնային Ղարաբաղին վերաբերող բաժնիները, փաստաթուղթը դադրեցաւ գոյութիւն ունենալէ: Այս հանգրուանին Հայաստանի արդարեւ շարունակուած է խօսիլ «Ձանգեգուրի միջանցքի» մասին յայտարարելով թէ, այդ միջանցքը պէտք է անարգել երթելու իր քաղաքացիներուն համար, այլապէս Հայաստանի հետ սահմանը չի կրնար բացուիլ որեւէ այլ կէտի վրայ: Այսինքն, Հայաստան պիտի շարունակէ մնալ շրջափակուած, բնականաբար նոյնը պիտի ընէ նաեւ Թուրքիան, անտեսելով Հայաստան-Թուրքիա բանակցութիւններու ընթացքին գոյացած մասնակի համաձայնութիւնները: Ալիեւ կը շարունակէ պնդել, որ «միջանցքը» նախատեսուած է 44-օրեայ պատերազմի ավարտին ստորագրուած եռակողմ յայտարարութեամբ: Այս կապակցութեամբ Փաշինեան յիշեցուց, որ Ատրպէյճանն ու Ռուսաստանը երբ խախտեցին համաձայնութեան Լեռնային Ղարաբաղին վերաբերող բաժնիները, փաստաթուղթը դադրեցաւ գոյութիւն ունենալէ:

## Ալիեւի Թիւ Մեկ Գործընկեր

Շարունակուած էջ 1-էն

կան շահերի» ծառայողներ: Երկրորդ խմբին խորհուրդ է տուել ճշտել իրենց գէնը:

նի ղեկավարութեան անճարակ գոր-  
ծակերպիչ ու անհոգութիւնը՝ կապ-  
ուած թափառող, անտէր շների հետ:  
Ըստ լրատուական տեղեկատուութեան,  
Հայաստանում 56 հազար թափառող  
շներ կան, որոնք հիմնականում  
«անուռ» են փողոցների չ'երեւացող  
անկիւններում տեղադրուած աղբա-  
մաններին:

Քաղաքապետարանը անտէր  
շներին նուազեցման միջոց է համա-  
րում նրանց Ստերփի (ամլութիւն,  
չբերութիւն) ենթարկելը՝ առանց  
հաշուի առնելու շան ցեղատեսակը,  
որի արդիւնքում ժամանակի ըն-  
թացքում կարող են վերանալ ազ-  
նիւ ցեղին պատկանող տարատե-  
սակներ:

Ուզում էք, որ շները չ'հա-  
ջե՞ն Ձեզ վրայ՝ հոգ տարէք նրանց  
մասին, մի թողէք անօթի, սոված,  
սիրեցէք նրանց ու կը տեսնէք, թէ  
ինչպէս են նրանք բարի հայաեաց-  
քով, փոխադարձ սիրով կապուած  
Ձեզ հետ ու շնորհակալ լինում:

...Առաջին շունը, որ յայտն-  
ուեց մեր ընտանիքից ներս՝ Հա-  
մաշխարհային Բ. Պատերազմից  
յետոյ էր: Հայրիկս նոր էր վերա-  
դարձել Ռուսիայից ու մի քանի  
օր անց, մայրիկիս հանել տուեց  
աշխատանքից:

Դու տանը մնայ եւ երեխանե-  
րին հոգ տար, ասել էր նա ու  
աւելացրել, ես կը վերադառնամ իմ  
նախկին աշխատանքին:

Խեղճ, միամիտ հայրիկս չգի-  
տէր, որ իր՝ ռազմագերի լինելու  
պատճառով ոչ ոք իրեն աշխատանք  
չի տայ:

Նրա վերադարձի առաջին իսկ  
ձմռանը, փողոցում, մի պատի տակ  
կծկուած փոքրիկ շնիկ տեսայ: Ես,  
որ հազիւ եօթ տարեկան էի, ի՞նչ  
կարող էի անել, եթէ ոչ շնիկին  
գրկել ու տանել մեր տուն:

Տղա՛ս, ի՞նչ պիտի անենք այս  
շնիկը, մենք՝ ինքներս անօթի,  
ի՞նչպէս պիտի կերակրենք այս  
շանը: Ախր այս շունը հովիւի շան  
ցեղից է, հաջել էլ չի կարող:

Վնաս չունի Յակոբ, ասաց  
մայրիկս, նա էլ մեզ հետ ետլայ կը  
գնայ, ի՞նչ անենք, խեղճ հայուա-  
նին, փողոց նետենք...:

Վճիռն արձակուած էր. Շնիկը  
մեզ հետ էր ապրելու, մեզ հետ  
պիտի բաժաներ մեր աղքատիկ  
ուտելիքը: Առաջին իսկ վայրկեա-  
նին մայրիկս կնքեց նրա անունը՝  
Ժոլի, որ ֆրանսերէն է եւ նշանա-  
կում է՝ գեղեցիկ, սիրուն:

Ժոլին ինձ հետ մեծացաւ, ինձ հետ  
բաժանեց մանկութիւնս ու պատանե-  
կութեան առաջին տարիները:

1956ին ինձ տարան Խորհր-  
դային բանակ՝ երեք տառայ ծա-  
ռայութեան, բայց ես ճիշդ եւ ճիշդ  
չորս ամիս յետոյ Երեւանում էի:  
(Սա էլ այլ պատմութիւն է, որ  
ուրիշ առիթով կը պատմեմ):

Անակնկալ անելու մտադրու-  
թեամբ, մերոնց տեղեկալ չէի պահել  
իմ վերադարձի մասին: Երեւանի  
երկաթուղային կայարանից հան-

րակառք (տրամուս) վերցրի մեր  
տուն հասնելու համար:

Կանգառից մինչեւ մեր տուն՝  
հազիւ 500 մեթր տարածութիւն է:  
Մինչ ես քայլում եմ, մայրս նկա-  
տում է, որ ծերութեան հասած  
տարիքոտ ժողին՝ անհանգիստ շար-  
ժումներ է անում եւ աշխատում է  
չղթագերծ լինել: Շան կատարու-  
թիւնն այնքան է բորբոքում, որ  
վերջինս կարողանում է ազատուել  
չղթայից ու իրեն փողոց նետել՝ ինձ  
դիմաւորելու համար:

Ահագին հեռաւորութիւնից, մեր  
Ժոլին հոտառութեամբ զգացել էր,  
որ տանն է մօտենում իր տէրը:  
Կորած հարգատին գտած լինելու  
պէս, առաջինը նա էր, որ փաթաթ-  
ուեց ինձ ու առատ թուրով լուաց  
դէմքս:

Դրանից յետոյ երկար չ'ապ-  
րեց մեր Ժոլին եւ որպէսզի իր  
վախճանը չտեսնեմ, մարդ կանչել  
տուրիք յատուկ ընկերութիւնից,  
իսկ մինչ նրա գալը ես արդէն  
երկու օր բացակայել էի տնից,  
որպէսզի չտեսնեմ, չ'ապրեմ անխ-  
ուսափելի բաժանման պահը:

\*\*\*

Յաջորդ շունը որ ունեցանք,  
1990ին էր, Ամերիկայում:

Մի օր, որդիս՝ Արամը ընկե-  
րով հետ, ֆրանսիական Պուզլ ցեղի  
շունը գրկին մեր տան բակից ներս  
մտաւ:

Հայրիկ, ասաց նա, այս շունի-  
կը 23 ամիս մեզ մօտ պիտի մնայ:  
Ընկերս Նիւ Եորք պիտի գնայ եւ  
մտերիմ մէկը չունի, որպէսզի նրա  
մօտ կարողանայ թողնել Սէնդիին  
(այս էր շան անունը):

Կինս՝ Մարիետան առարկեց,  
որովհետեւ շատ էր վախենում շնե-  
րից: Ի վերջոյ համոզեցինք, եւ այդ  
գործում մեծ դէր խաղաց մայրիկս՝  
Տիկին Վերժինէն, ատապազարցի  
այդ գիտուն եւ շէնշող կինը:

Կարճ ժամանակ անց, առանց  
Սէնտիի հնարաւոր չէր պատկե-  
րացնել մեր գոյութիւնը: Բոլորս  
խենթի պէս կապուել էինք շանը,  
մանաւանդ՝ կինս: Մեր յայտագիր-  
ներից ամբողջովին ջնջուեցին ըն-  
տանեօք քաղաքից բացակայելը,  
որեւէ տեղ գնալը: Եւ եթէ պատա-  
հէր, որ ամբողջ ցերեկը միայնակ  
թողնեինք Սէնդիին, խեղճը իր  
բնական պէտքերը պահում էր մին-  
չեւ մերոնցից որեւէ մէկի գալը,  
որպէսզի խցանի նման դուրս նետ-  
ուի իր պէտքերը հոգալու համար:

Եւ, հետաքրքիրն այն է, որ  
մենք երբեք չտեսանք նրա՝ իր  
պէտքերը հոգալը մեր ընդարձակ  
բակի որեւէ մի անկիւնում, իսկ  
բակից դուրս գալը բացառուած էր:

Երեք ամիս անց, ըստ պայմա-  
նաւորութեան, մեր տուն եկաւ  
Արամիս ընկերը: Մենք արդէն  
գիտէինք, որ նրա գալու ժամա-  
նակն էր, եւ ամենքս իւրովի ծանր  
էինք տանելու Սէնդիից բաժան-  
ուելու պահը: Բայց, հակառակ մեր  
սպասածի, երիտասարդը եկել էր  
խնդրելու, որպէսզի մէկերկու ամիս  
եւս հոգ տանենք Սէնդիին, որովհե-  
տեւ իր վարձած յարկաբաժնի մէջ  
արգիւտած էր շուն պահելը:

Երիտասարդը խնդրեց եւս  
երկու ամիս հոգ տանել Սէնդիին՝  
մինչեւ որ ինքը կարողանայ յար-  
մար բնակարան գտնել: Երկու ամիս  
էլ անցաւ, բայց շնատէրը մէջտեղ  
չկար: Մի օր, երբ ամէնքս սեղանի  
շուրջն էինք, դիմեցի Արամին:

Արամ, տղաս, նայիր, հաւա-  
նաբար այս օրերին բարեկամդ կը

գայ Սէնդիին տանելու, բայց մենք  
Սէնդիին չենք տալու, ականջիդ օղ  
արա, հասկացա՞ր...

Կարծես բոլորի սրտից էի  
խօսել: Նոյնը կրկնեցին թէ մայրս  
եւ թէ Մարիետան:

Արդէն ընտանիքի անդամ է  
դարձել Սէնդին, մենք չենք կարող  
բաժանուել նրանից, յարեց Մարի-  
ետան:

Իսկապէս էլ, Սէնդին դարձել  
էր յոյժ անհրաժեշտութիւն մեր  
տան մէջ: Առանց նրա անկարելի էր  
երեւակայել մեր կեանքը, մանա-  
ւանդ՝ մայրիկիս կեանքը: Իր ըն-  
կերն էր, խօսակիրը: Ամբողջ ցերե-  
կը նրա հետ էր, միայն երեկոներն  
էր վերապահուած մեզ, իսկ գիշեր-  
ները միայն իմն էր, անկողնուս  
վրայ էր քնում:

Մի օր Արամն ասաց, որ  
ընկերը գալու է շունը տանելու:  
Ամենքս մեր որոշումը տուել էինք  
արդէն՝ նոյնիսկ առանց իրար հետ  
խորհրդակցելու, ի՞նչ, Սէնդիին  
տանելու՞ են, անկարելի է...

Իսկապէս էլ, մի քանի օր  
յետոյ տղան երեսաց մեր բակի մէջ:  
Իր նախկին տէրը տեսնելուն պէս,  
Սէնդին վազեց դէպի նա: Տղան  
գիրկն առաւ շնիկին եւ համբոյր-  
ներով ողողեց շուարուն անասու-  
նին: Վերջինս տիրոջ գրկից իջնե-  
լուց յետոյ, չէր իմանում անելիքը,  
մէկ ինձ մօտ էր գալիս, մէկ՝  
մայրիկիս, մէկ Արամին:

Տղաս, դու Սէնդիին չես կա-  
րող տանել, նախաշարձակ ոճով  
ասացի ես:

Ինչպէ՞ս...

Ճիշդ այդպէս, դու, գրեթէ  
վեց ամիս Սէնդիին թողեցիր մեզ  
մօտ, եւ մենք՝ ամենքս վարժուե-  
ցինք նրան եւ առանց նրա մենք  
չենք կարող պատկերացնել մեր  
կեանքը: Եւ մեր իրաւունքն է  
այսուհետեւ նրան պահել մեր տան  
մէջ, որպէս լիիրաւ անդամի:

Ո՛չ, ո՛չ, չենք կարող տալ,  
աւելացրեց Մարիետան:

Ի՞նչպէս կարելի է, ես առանց  
Սէնդիի չեմ կարող ապրել, դուք  
գիտէ՞ք, թէ ինչ խելացի շուն է նա:,  
ասաց մի բոռ դառած երիտասար-  
դը ու սկսեց հեկեկալ ու շարունակել:

Մի օր, տանիցս մի 12 մղոն  
հեռաւորութեան վրայ, բենգինի  
լցակայանում էի թողել նրան, չէի  
նկատել, որ Սէնդին բաց դռնից  
իջել էր, հաւանաբար բնական պէտ-  
քի համար: Առանց անդրադառնա-  
լու եղածին, մեքենան վարեցի եւ  
եկայտը տուն: Տեսա, որ շունիկս  
չկայ: Անմիջապէս վերադարձայ  
լցակայան: Սէնդին չկար: Մէկ

շաբաթ անց, ամբողջովին անվնաս,  
գգալիօրէն նիհարած Սէնդին երե-  
ւաց իմ դրան շեմին: Ամէնքս  
ապշել էինք, որեւէ մէկն անգամ կը  
դժուարանայ այդքան հեռաւորու-  
թիւնից իր տունը գտնել ու քայ-  
լելով հասնել, մինչ այս փոքր  
անասունը գտել էր իր տունը՝ ո՞վ  
գիտէ ի՞նչ չարչարանքներ կրելուց  
յետոյ:

Երիտասարդի հեկեկոցն ու  
սրտածմլիկ պատմութիւնը խախ-  
տեց նաեւ մեր հաւասարակշու-  
թիւնը եւ կարծես ձէնձէնի տուած՝  
մենք էլ իւրովի սկսեցինք լաց  
լինել: Մթնոլորտը խաղաղ վիճակի  
բերելու մտահոգութեամբ, սկսեցի  
իմ «ճառը»:

Ինձ լսիր տղաս, ճիշդ է, այս  
շունը, որին նոյնիսկ դժուարանում  
եմ շուն անուանել, ինձ համար  
համր մարդ է, խելքը տեղին եւ  
աւելի հաւատարիմ, քան՝ շատ  
յաճախ՝ մարդը մարդուն: Քոնն է  
Սէնդին բարեկամս, այո՛, բայց մի  
քիչ էլ մերն է, եւ մենք վարժուե-  
ցինք նրան ու նա էլ մեզ: Կէս տարի  
նա մեզ հետ է, որպէս մեր բազման-  
դամ ընտանիքի հարազատ անդամ:  
Որքան որ գիտեմ, մենակ տղայ ես,  
դու պիտի աշխատես, կամ ուսա-  
նես, ո՞վ է հոգ տանելու Սէնդիին,  
մտածե՞լ ես այս մասին: Այս վեց  
ամսուայ ընթացքին 2 անգամ, 23  
օր հիւանդանոցում է եղել, դու  
կարո՞ղ ես այդքան ժամանակ ու  
նիւթական տրամադրել նրա հա-  
մար: Այնպէս որ տղաս, դու Սէնդի-  
ին թող մեզ մօտ եւ երբ ցանկանաս  
կարող ես գալ ու սիրել շունիկիդ:

Տղան, իհարկէ դժուարու-  
թեամբ համաձայնուեց եւ արցուն-  
քով ողողուն համբոյրներ դրոշմեց  
շան քթին, բերնին ու առանց մի  
բառ ասելու հեռացաւ:

Դրանից յետոյ, միայն երեք  
տարի կարողացանք վայելել Սէնդի-  
ին: Մայրիկիս մահուան օրը, 1993ի  
Նոյեմբերի 23ին Սէնդին անյատա-  
ցաւ տնից: Ամէնուր փնտռեցինք,  
ամբողջ Հովիվուղը տակնուվրայ  
արեցինք, ոստիկանութեանը լուր  
տուրիք, բայց՝ անօգուտ:

Փորձառու մարդիկ ասում են,  
որ երբ տան մէջ մէկը մահանում  
է՝ շները չեն դիմանում այդ ցաւին  
եւ գնում են աչքից հեռու մի  
ծածուկ տեղ ու աւանդում հողին:

Թէրեւս այդպէս եղաւ մեր  
Սէնդիի պարագային: Ո՞վ գիտի,  
սակայն ստույգ է, թէ շներն էլ,  
մարդկանց նման սիրել գիտեն:

Սովորելիք բան ունենք նրան-  
ցից, հը՛... ի՞նչ կ'ասէք..., թէ՛-  
րեւս...

## Թեմի Մելիտոնեան Նշանակուած է

Շարունակուած էջ 1-էն

թուականին՝ որպէս հաղորդակ-  
ցութեան եւ հրապարակայնութեան  
բաժնի ղեկավար, վերահսկելով ապ-  
րանքանիշի ռազմավարութիւնը եւ

շուկայագիտութիւնը:  
Մինչ Ամերիկեան Ֆիլիմի Ակա-  
դեմիա ընդունուելը, ան աշխա-  
տած է Ուաշինկթընի մէջ, այդ  
շարքին՝ Հայաստանի Հանրապե-  
տութեան դեսպանութեան մէջ:

## ԵՄ-ն Ատրպէյճանը Կը Զգուշացնէ

Շարունակուած էջ 1-էն

խանութեան, տարած քայլին ամ-  
բողջականութեան եւ հիմնախն-  
դիրները բացառապէս խաղաղ ճա-  
նապարհով լուծելուն: Մեր հաղոր-  
դակցութեան ուղիները կը մնան  
բաց: ԵՄ-ն կ'օգտագործէ բոլոր  
հնարաւորութիւնները Ատրպէյճա-  
նին յատուկ ուղերձներ հաղորդելու,  
որ Հայաստանի տարած քայլին ամ-  
բողջականութեան որեւէ խախտում  
անընդունելի է եւ ծանր հետե-

ւանքներ պիտի ունենայ մեր յարա-  
բերութիւններուն վրայ: Մենք կը  
մնանք հաստատուն այս դիրքորոշ-  
ման մէջ: Եւրոպական Խորհուրդի  
նախագահ Շարլ Միշլը, Բարձր  
ներկայացուցիչ Ժոզեփ Պորելը եւ  
ԵՄ յատուկ ներկայացուցիչ Թոմսոն  
Քլաարը կը շարունակեն իրենց  
ներգրաւուածութիւնը Հայաստա-  
նի եւ Ատրպէյճանի միջեւ կայուն  
եւ տեւական խաղաղութեան հաս-  
տատման համար», ըսած է Սթա-  
նօն:

# Սիլվա Կապուտիկեանի Ծննդեան 105-Ամեակ (1919-2024) Կրկին «Խօսք Իմ Որդուն»ի Բոցարժարժ Կրակով...

ՅԱԿՈՐ ՏԻՆԵԱՅԵԱՆ

20 Յունուարին, «Խօսք Իմ Որդուն»ի համբավաւոր երգիչ՝ Ամենայն Հայոց Բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեան (Երեւան, 20 Յունուար 1919 - Երեւան, 25 Օգոստոս 2006 ) կը բոլորէ իր ծննդեան 105-ամեակը:

Վահան Տէրեանի նայրեանաբորբ անուրջներուն մէջ մթնշաղուող այն արշալոյսը, որ բացուեցաւ Արեւելեան Հայաստանին՝ խորհրդային կարգերու հաստատումով՝ Մեծ Եղեռնի արհաւիրքէն վրիժացալ, հայրենի գրական փաղանգին բախտաւոր հոյլին մէջ (Համօ Սահեան, Սերօ Խանգաղեան, Յովհաննէս Շիրազ, Մարօ Մարգարեան, Վիգէն Խեչումեան, Հրաչեայ Յովհաննիսեան, Գէորգ Էմին, Աղաւնի եւ ուրիշներ), Սիլվա Կապուտիկեան՝ կրտսերագոյններէն մէկը այդ հոյլին, որքան սրտայոյզ ապրում ու ճակատագրի գիր, քերթողական եւ հապարակագրական իր արուեստով հանդիսացաւ այն գատորոշուող տաղանդը, որուն հոգիին անձեռնունելի տաճարի կամարներուն տակ փուլ եկան գետնաքար զոռոգութիւններ, պանդուրութիւններ մեր քաղաքական այրերուն, հասնելով Գ. Հանրապետութեան պետական կառուցներու հիմնումի ժամանակները, այլեւ յետանկախութեան տարիներու քաղաքական այրերու խակութիւնները կապուտիկեանական տիրական խօսքին մոգական հոստորութեամբը «կախուցեցան սիւնէն անկախութեան կախադանի...»:

Քնարերգակ՝ մինչեւ ծուծը իր արեան, կանացի հոգիով, այլեւ առնահունչ իր կեցուածքով, պահանջատիրական աննահանջ քայլով ու հաւասարակշռուած դատումներով՝ ամորձահատուած ու դաւադիր այդ քաղաքական այրերուն, նկատի առնելով յատկապէս անոնց պարագլուխ Ռ. Քոչարեանը, սուտ ու փուտ «հայրենասիրութեան» դիմաց, Մեծ Տիկինը՝ իր վշտամբեր ժողովուրդին իրարայջող եղեռններէն յառնած եւ ջահակիրը լինելու թեան, պայքարի, պարեցաւ սակայն ցաւալի, դժխեմ կորանքը 15-ամեայ անկախութեան կործանաւոր իրադարձութիւններու...:

1932-ին էր արդարեւ, 13 տարեկանին, երբ Յովհաննէս Թումանեանի ժողովրդականացած «Ապրէ՛ք երեխէք»ին պատանուհի Սիլվան կամ Սիրովորդը կը պատասխանէր իր երախայրիքը համարուող քերթուածով մը, «Պիտներ Կանչ»ին մէջ, աւելի ուշ՝ 1935-ին, «Գրական Թերթ»ի խմբագիր եւ բանաստեղծ Վահրամ Ալազանի խրախուսանքով կը սկսէին մամուլի մէջ երեւիլ բանաստեղծուհիին նորաբողջը քերթուածները այն ժամանակներուն, երբ Աղասի Խանջեանի անարգ սպանութեամբ եւ անոր յաջորդող Եղիշէ Չարենցի, Ակսէլ Բակունցի, Վահան Թովթեանի, Չապէլ Եսայեանի, Վահրամ Ալազանի եւ այլ երեւելի մտաւորականներու դէմ «վերէն արձակուած հրահանգներ»ու գործադրութեամբ, սարսափազոռ ձերբակալութիւնները, բանտարկութիւններն ու զնդակահարութիւնները արդ տակաւ առ տակաւ, մերթ անբազաւոր հրամաններով շնչահեղձ կը դարձնէին թէ՛ գրական եւ թէ՛ քաղաքական կեանքը Հայաս-



տան աշխարհի:  
1940-ին, Յովհաննէս Շիրազի հետ իր կնքած ամուսնական կեանքով՝ 8 Յունիս 1941-ին, Արա Շիրազի ծնունդէն ուղիղ երկու շաբաթ ետք՝ 22 Յունիսին կը բերէր հիթլերական հորդաներուն երխուժումը Խ. Միւթեան վրայ, սակայն աշխարհաքանդ այդ քառսին մէջ 22-ամեայ Կապուտիկեանի քերթուածները՝ իրենց քնարաշունչ, հայրենասիրական եւ սիրախանդ երգերով, այլեւ մայրական օրօրներով կ'աճեցնէին սիրտն ու հոգին փոքրիկն Արա Շիրազին...  
Քեզ ծիածա՛նը պիտի գուրգուրեր,

Ու քեզ քուն բերի հեքիա՛թ արտոյտի,  
Բայց շա՛նք է ճայթում օրոցքիդ վերել,  
Վրադ սաւառնում բազէ՛ն երկաթի...

.....  
Բազէ՛ն թող բերի քո աչքերից քուն,  
Քնիր շանթերի, որոտների մէջ.  
Մանկուց սովորիր ատել թշնամուն,  
Քանգի նա մանկուց կեանքդ խռովեց...

30-ական եւ 40-ական թուականներու սկիզբները գրուած ու ամփոփուած քերթուածները Կապուտիկեանի, լոյսի բարիքին կու գային Հայրենական Մեծ Պատերազմին՝ սովետական բանակներուն տարած յաղթանակի տարին՝ 1945-ին, «Օրերի Հետ» խորագրի տակ: Հարկաւ, այդ օրերը իրենց բուն իմաստով կը ցոլացնէին այն դժնէ ժամանակները, որոնց թաւալքին հետ եւ անոնց բերած վիշտին ու արցունքին մէջ կ'երանգաւորէին ծիածանահիւս յոյսը բազմատառապ մեր ազգին, յոյսը՝ որ Սիլվա Կապուտիկեանին էր, ուղիղ մաճակատներու վրայ մահը տապալելու եւ յաղթութեամբ վերջառնելու աննկուն կամքով...  
Կի՛ն, ծաղկո՛ւմն ես դու կեանքի, սակայն ահա աշխարհում,  
Շղթայագերձ մահը ժամո՛ւ՛ մեր խնկարոյր դաշտերում,  
Տես, մոլեգնե՛լ է կրկին ու բարձրացրել է քո դէմ  
Իր դրօշակը դեղին եւ գերանդի՛ն մահադէմ...

Կի՛ն, դու մահի ախոյեան, մրցակցուհի՛դ դափնետր,  
Ծնկաչոք է միշտ եղել մահը ոտքիդ մօտ հօր...  
Ամենայն Հայոց Բանաստեղծուհիին հրատարակուած գիրքերու շարքը կու տամ ժամանակագրական կարգով՝ 1942-էն մինչեւ 2006 թուական... «Հատուցում»,

«Սարեակներ», «Երկու Զրոյց Մանուկների Հետ», «Վահանիկի Երագը», «Օրերի Հետ», «Զանգուի Ափին», «Այս Իմ Երկիրն է», «Փոքրիկ Արա, Ականջ Արա», «Դէպի Մոսկուա», «Իմ Հարազատները», «Մեր Լիլիկը, Մեր Բալիկը», «Տանը, Բակում, Փողոցում», «Քերթուածներ», «Սրտաբաց Զրոյց», «Բարի Երթ», «Մէկ Տարով էլ Մեծացանք», «Արդէն Գիտեմ Նկարել», «Մենք Օգնում ենք Մայրիկին», «Մտորումներ Ճանապարհի Կէսին», «Բանաստեղծութիւններ», «Մեր Փռնակու Մեքենան», «Քարաւանները Դեռ Քայլում են», «Եօթ Կայարաններ», «Իմ էջը», «Երգ Երգոց», «Դէպի Խորքը Լեբան», «Երկերի ժողովածոյ» (երկու հատորով), «Խճանկար Հոգու Եւ Քարտէսի Գոյներից», «Հատընտիր», «Իմ Ժամանակը», «Լիլիթ», «Ձմեռ Ի Գալիս», «Մաղկանոց», «Երկեր» (երեք հատորով), «Գոյներ Նոյն Խճանկարից», «Գիրս Մնայ Յիշատակող», «Երկու Քոյրիկ, Երկու Ուրիկ», «Հոգու Նոյն Երթուղիներով», «Տազնայ» (բանաստեղծութիւններ), «Գոյներ Իրանահայ Աշխարհից», «Էջեր Փակ Գրողներից», «Քարաւանները Հեռանում են», «80 Երգ Սիրոյ Մասին», «Չեմ Կարող Լուել», «Ճեպանկարներ Ստամպուլից Եւ Երուսաղէմից», «Իմ Կածանը Աշխարհի Ճանապարհներին», «Պարտէզ» (մանուկների համար), «Պարսից Պոէզիայի Ընտրանի՝ Սիլվա Կապուտիկեանի Թարգմանութեամբ»,

մշակութային կառուցներու պահպանման մէջ, նոյն ատեն միշտ նախատինք կարողալով պարտուողական ճանապարհներու վրայ դեգերուն եւ «պարկ մը փուտ ալիւրով» ընտրազանգուած սարքող-սաղորդ օրուան քաղաքական դաւաճան ու ապիկար այրերուն դէմ...:

Մեծ քերթողին կարապի երգն եղող «Վերջին Զանգ»ը (2006)՝ լոյս տեսած իր շիջումէն քիչ առաջ, այն մատենան է, որուն հրապարակագրական, յուշագրական եւ քերթողական անթառամ էջերը, մեր ժողովուրդը զգաստութեան հրաւիրող, սթափեցնող պոթիկումներով, եկան որպէս գրական աւետարան՝ 1991-էն ետք անկախութեան տարիներու կորանքի գառիթափին երկնուած ու անցեալի խոշոր նուաճումներէն յետոյ, ոչ թէ «որդու պատգամ որպէս»՝ ինչպէս ան գրած էր ուղիղ 80 տարի առաջ, այլ՝ յաւերժացանգ իր ժողովուրդին՝ «Հայկեան նետից մեր սրբազան» մինչեւ բոսորագեղ դարերը վաղուան...:

\*\*\*

Իր ծննդեան 105-ամեակը նշելով, ան՝ անշիջելի փառքը խորհրդահայ դասականներու շքեղ հոյլի մեծերուն վերջին մեծը, շուրջ 18 տարիէ ֆիզիքապէս մեզի հետ չէ, չկայ ու դադրած է արդարութիւն պահանջող յանդուգն ձայնը, Սուրբ Մեսրոպի «հազարազանձ լեզուն» հանգեցնելու ծառայող, փոլիթիքոններուն դէմ անվեհեր սուր ու թուր բարձրացնող, խորհրդահայ



Ս. Կապուտիկեան եւ Ամենայն Հայոց Վազգէն Ա. կաթողիկոս

«Հայերգութիւն», «Սիրերգութիւն», «Եօթ Տասնեակ Տարի», «Նա Իր Գոյութեամբ Սրբացնում էր Մթնոլորտը», «Վերջին Զանգ»:

Գրական Հարուստ Ժառանգութիւն մ'ապաքէն, որուն պատգամախօսի կենսաթրթիւ ապրումներով սրտաբաց անկեղծութեան հասնող հնչերանգները միշտ մնացին վերթեղող՝ Հայրենիքին ձեռք բերած գիտական ու արուեստի ոլորտներէ ներս նուաճումներուն ի տես:

Եւ Սփիւռքը, Սիլվա Կապուտիկեանի բանականութեան մէն մի տրոփին մէջ, համազգային ողբերգութեամբ ապրուած անքակտելի օղակներով ողջ պատմութիւն մ'է արդարեւ, որուն «դեռ քայլող քարաւանային» աշխարհասփիւռ զանգուածները, ուր ինք շրջեցաւ, ապրեցաւ անոնց համզգաց վիշտն ու յոյսը եւ գրեց մատենան առ մատենան, ո'չ յուսաբեկ երգերով, ամէն բանէ առաջ եւ գերիվեր՝ Հայաստանի հողային անվտանգութիւնը տեսնելով մի'այն միասնականութեամբ դրսեւորող Սփիւռքի

քերթողութեան ներհուն ճարտարագէտներու վերջին մոհիկանը, մեծատաղանդ Ամենայն Հայոց Բանաստեղծուհին:

Չկայ Հայաստանի հողային անվտանգութեամբ իսկապէ՛ս մտատանջուող գրական յառաջակարկաւ վերջին շեփորահարը, Հայաստան ու Արցախ հայրենիքներու լինելութեան ի խնդիր ինք իսկ պայքարներու ասպար ու խորհրդանիշ դարձած, ուժացում ու եաթաղան կոչուող ասպատակիչ ոտխներու դէմ խրոխտ ու խիզախ ելոյթներու սիրուած ու փնտուած պատգամախօսը՝ Սիլվա Կապուտիկեանը: Բայց մի'շտ կայ ինք մեր լինելութեան մէն մի կսկծանքի կածաններուն, յոյզի հովիտներուն, աճող վիշտերուն ու յոյսերուն մէջ. կա՛նք մենք՝ իր գրական ժառանգորդները, Հայաստանի, «լուծարուած» Արցախի եւ Սփիւռքի ողջ ժողովուրդը...:

Կ'ըսեն, թէ մարդ չի գիտեր

# Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցւոյ «Փեթակ» Շաբաթօրեայ Դպրոցը Տօնեց Ծնունդը եւ Նոր Տարին



23 Դեկտեմբեր, 2023, Շաբաթ օր ցնծուն եւ խանդավառ օր էր Քալիֆորնիոյ Փասատենա քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւոյ «Փեթակ» շաբաթօրեայ դպրոցի մէջ: Տօնական հագուստներ հագած աշակերտներ, ծնողներ, մեծ հայրեր եւ մեծ մայրեր Մանուկ Յիսուսի ծննդեան օրը տօնելու համար, մոմեր բռնած մտան տաճար եւ ներկայ եղան աշակերտներու համար պատրաստուած արարողութեան:

Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Սարգիս աւ. քահանայ ֆեթոյեան սիրալիւր խօսքերով դիմաւորեց դպրոցի սաները, ապա սկսաւ փոքրիկներուն հասկնալի եւ կատակախառն լեզուով բացատրել Յիսուսի ծննդեան իմաստը: Աշակերտները

ցաւ Տունայեանց սրահի մէջ: Հայկական նոր տարուայ ուրախ երգերով աշակերտները եւ հիւրերը լեցուցին սրահը: Ապա, բոլոր երեխաները բեմի վրայ ժպտադէմ երգեցին Կաղանդ Պապային, Ամանօրին, լուսավոր եւ զարդարուած տօնածառին նուիրուած երգեր: Աշակերտները երգեցին նաեւ «Խաղաղ գիշեր» երգը, որուն խօսքերը կը պատկանին Լեւոն Շանթին, իսկ երաժշտութիւնը՝ Բարսեղ Կանաչեանին:

Եւ հասաւ սպասուած պահը. Կաղանդ Պապան իր պղնձեայ ձեռնազանգակը հնչեցնելով, աւետելով Նոր Տարին, ուրախութեան պոռչտուքներու մէջ մուտք գործեց սրահ: Ան փառաւորապէս բազմեցաւ իր գահի վրայ, բա-



ղնթերցումներով, տէր Սարգիսի հարցումներուն բարձրաձայն պատասխաններ տալով աշխոյժ մաս կազմեցին այս քարոզ-դաստիարակութեան:

Ապա, աշակերտները բեմ ելան եւ երգի ուսուցչուհի Մարալ Քիւրտեանի առաջնորդութեամբ երգեցին Տէրունական աղօթքը եւ տօնական հոգեւոր երգեր: Աշակերտները հաղորդութիւն ստացան դպրոցի ուսուցչուհի Ազնիւ Սէրայտարեանի մենակատարած ընտիր շարականներու ստեղծած խորհրդաւոր մթնոլորտի մէջ: Օրը երկրորդ երանգ ստա-

ցատրեց թէ Արարտի վրայ կուտակուած առատ ձիւնի պատճառով քիչ մը ուշացած է, Չերմ գրոյցներ ունեցաւ իւրաքանչիւր սանիկի հետ, ապա անոնց տուաւ սիրուն նուէրներ:

Այս բացառիկ յայտագիրը աւարտեցաւ ախորժաբեր սեղանի շուրջ, ու զարդարուած էր դպրոցի մայրերու կողմէ բերուած հայկական աւանդական ճաշատեսակներով:

«Փեթակ» շաբաթօրեայ դպրոցը կը շնորհաւորէ Նոր Տարին, բոլորին մաղթելով խաղաղութիւն եւ երջանկութիւն:

## Գրախօսական

Շարունակուած էջ 11-էն  
բարոյական գոհողութիւններու:  
Այս հատորին բովանդակած 29 անգլերէն եւ 14 հայերէն յօդուածները հանրութեան մատուցանելով, Վեր. Վահան Թութիկեան կը յուսայ «սփիւռքահայ գրականութեան հետզհետէ մթազնոյղ երկնա-

կամարին վրայ փոքրիկ լոյս մը» վառած ըլլալ: Կը մաղթենք որ Աստուծոյ օգնութեամբ ան շարունակէ առաջնորդել մեզ իր երկարած հասկանալի գրութիւններով, եւ առիթը ունենանք զանոնք կարդալու իր յառաջիկայ 50-րդ գիրքին մէջ՝ շատ մօտիկ ապագային:

# Պոլսահայ Անուանի ճարտարապետներ՝ Պալեան Եղբայները Յիշատակուեցան



Յունուարի 14-ին կը նշուի Յովհաննու Կարապետի ծննդեան օրը եւ յատուկ արարողութիւն կը կատարուի եկեղեցիներուն մէջ:  
Պէշիկթաշի Ս. Աստուածածին եկեղեցւոյ համար այս յիշատակութիւնը՝ կը նոյնանայ այլ ոգեկոչման մը հետ եւս: Արդարեւ, Թաղային Խորհուրդը, ամէն տարի, այս օրը կը յիշատակէ եկեղեցւոյ ճարտարապետ Կարապետ Պալեանի ու Սարգիս Պալեանը: Ինչպէս ծանօթ է, փայտաշէն եկեղեցին 1838-ին, որպէս հոյակապ որմնաշէնք, իր հոյակապ ոճով, Կարապետ Պալեանի ճարտարապետական յղացքի գլուխ գործոցներէն մէկը կը հանդիսանայ, այն ժամանակուան հազուադէպ գթմբէթաւոր կառուցներէն մէկն է երբ արգիլուած էին գմբէթները: Որպէս ճարտարապետական վարպետութեան գործ մը եկեղեցին օժտուած է դուրսէն անտեսանլի ներքին գմբէթով մը:  
Գալով Սարգիս Պալեանի, ան եկեղեցւոյ կից կառուցած է Մաքրուհեան վարժարանը, ի յիշատակ իր վաղամեռիկ կնոջ: Երկուքն ալ յիշատակուեցան Ս. Պատարագի ընթացքին:

## Մահ Դերասանուհի Սիրարփի Աճէմեանի

Թորոնթոյի մէջ իր մահանացուն կնքած է նախկին պոլսահայ դերասանուհի եւ բեմադրիչ Սիրարփի Աճէմեանը, որուն հետ անմոռանալի յիշատակներ ունին բազմաթիւ մշակութասէրներ:  
Սիրարփի Աճէմեանի մահը պատահած էր անցեալ Շաբաթ օր: Հանգուցեալին փափաքին համաձայն, առանց եկեղեցի երթալու մարմինը պիտի հրկիզեն ու մոխիրները ծով պիտի թափեն: Կիրակի օր իր մարմինն արդէն հրկիզուած էր:  
Տարիներ առաջ Սիրարփի Աճէմեան գլխաւոր դերով հանդէս եկած էր Ռոպերթ Հատտէճեանի «Մահը ա՛յս է արդեօք» թատերախաղին մէջ: Բացի անկէ ան հանգուցեալ Արթո Պէրպէրեանի հետ զանազան միութիւններու բեմերուն վրայ, աւլի քան 35 անգամ, ներկայացուցած էր Ռ. Հատտէճեանի «Կեանքի մը երեք Կիրակիները» թատերախաղը:  
Հանգուցեալը պոլսահայ հանրայայտ օփերային երգչուհի Ալիս Մանուկեանի քույրն է: Ան Մոնթրէալի մէջ շարունակած էր իր ստեղ-



ծագործական աշխատանքը, որպէս կեանքի ասպարէզի կողմնացոյց ընտրելով «Պահէ աւանդը» կարգախօսը: Ս. Աճէմեան երկար տարիներ շարունակ, ոչ միայն պահպանած, այլ նաեւ իր անմնացորդ նուիրումը բերած է թատերական ոլորտին, հանդէս գալով ոչ միայն որպէս դերասանուհի, այլ որպէս բեմադրիչ եւ համայնքային գործիչ:

## Յո՞ Երթաս Մեծն Լոս Անճելոսահայ Գաղութ

Շարունակուած էջ 11-էն  
**Ե. Եկեղեցի**  
1. Սբ. Յովհաննու-Կարապետ եկեղեցի, Հալիվուս  
Այս եկեղեցին քանդեցին որպէսզի նորոգեն, սակայն դժբախտաբար շինարարութիւնը չաւարտեցաւ եւ ուրեմն եկեղեցին մնաց անգործածելի:  
**Վեջարան**  
Մշակոյթը՝ դպրոցներով, միութիւններով, մամուլով եւ եկեղեցիներով, միակ գրաւականն է

հայապահպանման գոյատեւման՝ սփիւռքի մեր դժնդակ պայմաններուն մէջ:  
Մենք ազգովին պէտք է տէր կանգնինք մեր դարաւոր մշակութալին ժառանգին եւ պահպանենք զայն ամէն գնով, այլապէս՝ պիտի կորսնցնենք աւելի քան երկու հազարամեայ մեր ինքնութիւնը, որպէս հայ:  
Որպէս եզրակացութիւն՝ ես պիտի ըսեմ, «Աւաղ փառացս անցաւորի...» Յուսանք որ ապագան աւելի լաւ օրեր վերապահած կ'ըլլայ մեզի...

### ՀՈԳԵՅԱԼԳԻՍ



ԼՈՒԼԻ (ԽԱՅԵԱՆ) ՖԵՐՄԱՆԵԱՆ

Լուլու (Խայան) Ֆերմանեանի մահուան քսանչորրորդ (24) տարելիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Յունուար, 2024-ին, Ս. Պետրոս Հայց. Առաքելական Եկեղեցու մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, յաւարտ Ս. Պատարագի:

Սգակիրներ՝  
Տէր եւ Տիկին Արա Ֆերմանեան,  
Վիզէն Գուլումեան:

### ՄԱՐԱԶԴ



ՍԱՐԳԻՍ ՌԼՁԵԱՆ (1953-2024)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր ամուսնոյն, հօր, եղբօր, հօրեղբօր եւ հարազատին՝ ՍԱՐԳԻՍ ՌԼՁԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 6 Յունուար, 2024-ին, յետ կարճատեւ հիւանդութեան: Թաղման արարողութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, Դեկտեմբեր 11, 2024-ին, Մոնրէյալի մէջ, Գանատա:

Սգակիրներ՝  
Այրին՝ Տիկ. Յասմիկ Ռեզեան եւ դուստրը Նայիրի Տիկ. Հռիփսիմէ ժամկոչեան եւ ընտանիք  
Տիկ. Սոնիա Այվազեան եւ ընտանիք  
Տէր եւ Տիկ. Արա Ռեզեան եւ ընտանիք  
Տէր եւ Տիկ. Սեւակ Ռեզեան եւ ընտանիք  
Տիկ. Զելլա Ռեզեան եւ ընտանիք  
Եւ Ռեզեան, ժամկոչեան, Չարլքեան, Ղարիպեան եւ Այվազեան ընտանիքներ:

### Սիլվա Կապուտիկեանի Ծննդեան 105-Ամեակ

Շարունակուած էջ 13-էն

ե՞րբ է իր մահուան օրը. բայց այդպէս չէր Սիլվա Կապուտիկեանի համար՝ զինք շրջապատող հարազատներուն տուած վկայութեանց համաձայն: Բանաստեղծուհին կանխատեսներ ու իր քանի մը մտերիմներուն յայտնէր էր 2006-ի Օգոստոսի վախճանէն առաջ պատահելիք իր մահը, յորդորելով հայ ժողովուրդը մնալ աննկուն, անոր յիշեցնելով ե՛ւ գօտեպնդելով իր «Ոսկեհատիկ» քերթուածին անմահ տողերուն վարակիչ շունչովը: -

Ու երբ որ հասնեմ ու խորթ մօրնման,  
Մահն ինձ ուզենայ կորցնել իր ձեռքով,  
Ո՛չ, ես չեմ կորչի, ես ետ կը դառնամ  
Իմ ոսկեհատիկ երգերի հետ-

քով...:  
Արդարեւ, Ս. Կապուտիկեանի անունն ու գործը, հաւասարապէս հայրենի ժողովուրդին ե՛ւ սփիւռքահայուն սիրտին ու միտքին մէջ ամրագրուած մնացին երախայրքին՝ «Օրերի Հետ» քերթողական վտիտ տետրակի յատկապէս «Խօսք իմ Որդուն» հայրենաշունչ քերթուածին համազգային բաբախումներով, մշտաթարմ արեամբ, որ սփիւռքահայ բոլոր դպրոցականներու շուրթերուն վրայ տեսակ մը աստուածաշնչեան արարում՝ հայրութիւնը համախմբեց Մայր լեզուն չմոռանալու հօր պատգամով: -  
...Բաց շուրթերդ, խօսի՛ր, անգիմ,  
ժիր դայլայլի՛ր, իմ սիրասուն,  
Թող մանկանայ՛ք շուրթերիդ Մեր ալեհե՛ր հայոց լեզուն...  
...Ու տե՛ս, որդիս, ո՛ւր է լինես,

Այս լուսնի տակ ո՛ւր էլ գնաս, թէ մօրդ անգամ մտքից հանես,

Քո մա՛յր լեզուն չմոռանա՛ս...:

Տիպար Քաղաքացիի կոչումին արժանացած մեծ բանաստեղծուհին ներաշխարհէն ներս, իր բանաստեղծութիւններու բոլոր մէջ քովէ քով շքերթեցին «Հայկական Դիմադրութիւն»ի դրօշը պարագրկած իր աներեր քաղաքական կեցուածքներն ու ընդհանրապէս արեւելումը՝ մանաւանդ 80-ական թուականներէն Արցախի վերատիրացման պայքարի եւ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու (60-ական թուականներէն) զարգացման ի սպաս տարուած «քայլող քարականներ»ու ճամբուն վրայ...:

Հետեւաբար, իր մահէն 18 տարի ետք այսօր ալ, համայն հայրութիւնը ոչ միայն կը սգայ մահը մեծ բանաստեղծուհին, այլ կը կոտտայ կորուստը «Հայկական Դիմադրութիւն»ի վերջին ու անառիկ մարտկոցը համարուող ազգային-հասարակական գործիչին, որ ապրեցաւ վերիվայրումներով աղմկայոյզ կորանքը Հայաստանի 15-ամեայ անկախութեան (1991-2006) 1 իր ողջութեան, ինք էր որ սիւնին գամեց ամօթի խարանը քաղաքական չքոտի այրերուն: Իր «Կարապի երգ»ին՝ «Վերջին Զանգ»ին մէջ 9 տուննոց «Ապստամբութիւն» բանաստեղծութեան (գրուած 2003-2004 Դեկտ.-Ապրիլ) եզրայանգումը խորապէս կը ցնցէ հայ ընթերցողը. կու տամ անոր վերջին չորս տունները: -

...Օ՛, խաղատուն դարձած հայրենական մեր տուն,

Յեխերի մէջ ընկած մագաղաթայ մատեան,

Կախաղանի սիւնից կախուած անկախութիւն,

Մեր լոյս երագնեթի խաւարակու պատեան:

Ես ի՞նչ, ի՞նչ խօսքերով նզովք կարդամ ու սաստ,

Զեզ, որ խուժուժ կարգերն այս երկնեցիք,

Ուր դուք դարձաք հեծեալ, ժողովուրդը՝ գրաստ,

Օտարի դուռն ընկած մի մութրացիկ:

Եւ ես՝ հայ բանաստեղծ, ի՞նչ սեւ բախտի հասայ,

Որ նզովքի խօսք եմ ասում... հայիմ:

Հօր ճախրից յետոյ՝ այս անկունը տեսայ

Եւ ապրեցի օրերն այս դիւայիմ:

Ո՛չ, չեմ ապրում արդէն ու ես չեմ էլ մեռնում,

Իսկ եթէ՝ անէ՛ծք վերին՝ մնաք ինձնից երկար,

Մէ՛կ է, ո՛ւր էլ հանգչիմ, ո՛ր մի գերեզմանում,

Ես ձեր դատաստանիմ լինելու եմ ներկայ...:

Վատահաբար բանաստեղծուհին երկինքէն ներկայ է տունտունիկ խաղցող եւ ընթացող դատաստանին՝ այն նզովեալ դատապարտեալին նկատմամբ, որ սինիքաբար դեռ կը յոխորտայ 1999-ի 27 Հոկտեմբերի նահատակներու դեռ չչորցած արեան վրայ...: Այդ եղեռնագործութեան չորսուկէս տարի ետք՝ 2004-ի Ապրիլին, բի՛րտ ուժով, ծեծուճարով ընդդիմութեան հաւաքը արեան կուտահանդէսի վերածած նո՛յն տիրահաւաքի դատապարտեալին վերադարձուցեր էր անոր շնորհած՝ «Մուրբ Մեարոյ Մաշտոց» մետալը...:

\*\*\*\*\*

Իր խոհեմութեամբ շրջանցելով ստալինեան սարսփազդու ժամանակներու վտանգաւոր հանգրուանները, 40-ական թուականներէն Կապուտիկեան միացաւ իր գրչի ընկերներուն՝ Ն. Զարեանին, Ս. Տարօնցիին, Գ. Մահարիին, Վ. Ալազանին, Խ. Դաշտենցիին, Հ. ՍաՀեանին, Յ. Շիրազին, Մ. Մարգարեանին եւ իրմէ յետոյ եկող մտաւորականներու շքեղ հոյլին: Աւելի քան վեց տասնամեակ ան տուաւ բանաստեղծական պատկառելի թիւով ու որակով երկեր, արձակ, թարգմանական, հրապարակագրական եւ մանկագրական բազմաթիւ էջեր, իրաւամբ արժանանալով Ամենայն Հայոց Բանաստեղծուհի տիտղոսի:

Աւելի քան երկու տասնամեակ առաջ, Երեւանի Ամբիկեան Համալսարանի գիտաժողովներէն մէկուն էր՝ արտասահմանէն ալ ժամանած հիւրերու ներկայութեամբ: Հայ գիտնականներու մասնակցութեամբ կայացած այդ գիտաժողովին ներկայ էր նաեւ Սիլվա Կապուտիկեան, որուն շունղալից, ըմբոստագին ու բարձրագու բացազանչումը դահլիճէն ներս՝ համաշխարհայնացումի, համացանցային դիմատետրի ու ընկերային խայտաբղէտ լրատուական ցանցերու սա ժամանակներուն աշխարհի ազգերու համաձուլումը պահանջող ամբիկացի գիտնականի երեսին, կը մնայ հոգեցունց ու շատ շատերու յիշողութեան մէջ զամուսն ելոյթներէն մէկը բանաստեղծուհին՝ ընդդէմ գուհիօրէն պատասխանող այդ ամբիկացի գիտնականին, որ դահլիճը ձգելէ առաջ, խօսքը հայ գիտնականներուն ուղղելով ըսած էր.

-Լա՛ւ, դուք մնացէք ձեր 20-րդ դարու հետ, իսկ մենք կ'երթանք առաջ...:

-Այո՛, մենք կը մնանք մեր Ե. դարի հետ, եւ այդ դարի մեր մեծերին՝ Մաշտոցին, Խորենացուն, Եղիշէին, այնուհետեւ՝ Դաւիթ Անյաղթին, Շիրակացուն, այնուհետեւ՝ Նարեկացուն, այնուհետեւ՝ Վիքթոր Համբարձումեանին, Սարեանին, Խաչատրեանին, այնուհետեւ՝ Գրիգոր Գուրգադեանին հետներս առած, կը մտնենք 21-րդ դար ու երրորդ հազարամեակ, բացազանչած էր Սիլվա Կապուտիկեան:

Այսպէ՛ս էր ի սկզբանէ ու այսպէ՛ս ալ մնաց մինչեւ իր հուսկ շունչը, «Խօսք իմ Որդուն»ի անմահանուն երգիչը՝ Մեծն Սիլվա Կապուտիկեանը, որուն «Ո՛Չ»ն ու «ԱՅՈ՛»ն ասպարուեցան Մուրբ Մեարոյի ու Սահակ Պարթեւի տիեզերական ուժականութեամբ, անպարտելի՛ իր կամքով ու հաւատքով:

Վարպետը՝ Աւետիք Իսահակեանը, 20 Յունուար 1955-ին, սրտի բոլոր ջերմութեամբ գրած էր Սիլվա Կապուտիկեանի ծննդեան տարեդարձին առիթով. «Չլինէր ծովը, երկնքի պատկերը երկրի վրայ չէր լինի, չլինէր քո պոէզիան ... շատ խաւար կը լինէր մեր երկիրը: Ապրի՛ր, ստեղծի՛ր, եղի՛ր հաւատարիմ մեր ժողովրդի իղձերին»: Ու Կապուտիկեան ստեղծագործեց, ապրեցաւ աւելի երկար՝ քան իր գրչի ընկերները, ստեղծագործեց բիւրապատի՛կ ու մնա՛ց հաւատարիմ իր ժողովուրդի իղձերուն:

Ափսո՛ս, հազար ափսո՛ս, որ ա՛լ չկա՛ն ու անդարձ գացին թուամանեան եւ իսահակեան, Չարենց ու Սահեան, Սեւակ ու Շիրազ, էմին ու Կապուտիկեան եւ մեր ժողովուրդը գուցէ շատ երկար սպասէ ծնունդներու Կապուտիկեաններու, Սեւակներու, Շիրազներու, թերեւս ալ՝ սպասման իղձովը մեռնի...:

«Աղթամար»

### «Ռեալը Մատրիտ» Նուաճեց Սպանիայի Սուպերգավաթը՝ Յաղթելով «Պարսելոնային»



Մատրիտի «Ռեալը» նուաճեց Սպանիայի սուպերգավաթը: Սէնտեան Արապիայի մայրաքաղաք Ռիատի մէջ տեղի ունեցած եզրափակիչին Արքայական խումբը 4:1 հաշուով յաղթեց ախոյեան «Պարսելոնային»:

Իտալացի Կառլո Անչելոտիի գլխավորած խումբէն առաջին խաղակէսին հեթ-տրիկի հեղինակ դարձաւ պրագիլցի յարձակող Վինիսիուս Ժունիորը: Կատալոնական խումբի կողմ խփեց լեհ յարձակող Ռոբերտ Լեանդովսկին:

Երկրորդ խաղակէսին «Ռեալը» հաշիւը աւելցուց պրագիլցի կիսապաշտպան Ռոդրիգոյի կողմ շնորհիւ:

Վերջի բաժնին «Պարսելոնան» ամբողջացուց 10 ֆուտպոլիստներով: 71-րդ վայրկեանին երկրորդ դեղին քարտի համար հեռացուեցաւ ուրուգուայցի պաշտպան Ռոնալդ Արաուխոն:

«Ռեալը» 13-րդ անգամ նուաճեց Սպանիայի սուպերգավաթը:

### «Մանչըսթըր Սիթին» Պարտութեան Մատնեց «Նիւքասլ Եունայթըտին»

Անգլիայի Պրեմիեր լիգայի առաջնութեան 21-րդ հանգրուանին ախոյեան «Մանչըսթըր Սիթին» հիւրընկալեց «Նիւքասլ Եունայթըտին» եւ յաղթեց 3:2 հաշուով:

Հանդիպման հաշիւը 26-րդ վայրկեանին բացաւ փորթուկալացի կիսապաշտպան Բերնարդու Սիլվան: Մինչեւ ընդմիջում դաշտի տէրերը հաւասարեցուցին եւ առաջ անցան հաշուի մէջ շուտացի յարձակող Ալեքսանդր Իսակի եւ անգլիացի յարձակող Էնթոնի Գորդոնի կողմէն շնորհիւ:

Կատալոնացի խոսեպ Գուարդիոլայի գլխավորած խումբէն հաւասարութիւնը վերականգնեց պելճիքացի կիսապաշտպան Կեւին Դէ Բրոյնէն: Հիւրերու յաղթական կողմ խփեց նորվեկիացի կիսապաշտպան Օսկար Բոբբը:

«Մանչըսթըր Սիթին» (20 խաղ) 43 կէտով երկրորդն է եւ առաջատար «Լիվըրպուլն» (20 խաղ) հետ է 2 կէտ: «Նիւքասլ Եունայթըտը» (21 խաղ) 10-րդն է՝ 29 կէտ:



### «Մանչըսթըր Եունայթըտը» - «Տոտենհեմ»՝ 2:2

Անգլիայի առաջնութեան 21-րդ հանգրուանին «Մանչըսթըր Եունայթըտը» ընդունեց Լոնտոնի «Տոտենհեմին»: Գրանցուեցաւ ոչ ոքի: Խումբերը երկուական կողմ փոխանակեցին:

«Տոտենհեմը» 40 կէտով 5-րդ տեղն է, «Մանչըսթըր Եունայթըտը» վաստակած է 32 կէտ եւ 7-րդ տեղն է:

### «Չելսին» Ուժեղ էր «Ֆուլհեմն»

Անգլիայի Պրեմիեր լիգայի առաջնութեան 21-րդ հանգրուանին տեղի ունեցած լոնտոնեան դերբիի մէջ մրցեցան «Չելսին» ու «Ֆուլհեմը»:

1:0 հաշուով առաւելութեան հասաւ «Չելսին»: Միակ կողմ առաջին խաղակէսին աւելացուած ժամանակին խփեց անգլիացի կիսապաշտպան Գոլու Գալմերը:

«Չելսին» 31 կէտով 8-րդն է, «Ֆուլհեմը» 13-րդն է՝ 24 կէտ:

### «Լիվըրքուսընը» Յաղթեց եւ 4 Միաւոր Առաջ է «Պալաքիայն»

Գերմանիայի առաջնութեան 17-րդ հանգրուանին առաջատար «Լիվըրքուսընը» հիւրընկալեց «Աուգսբուրգին» եւ առաւելութեան հասաւ նուազագոյն հաշուով:

Սպանացի խաբի Ալոնսոյի գլխավորած խումբին յաղթանակ բերաւ արժենթինացի կիսապաշտպան Էկսելիէլ Պալասիոսի խփած կողմ:

«Լիվըրքուսընը» ընթացիկ առաջնութեան դեռ պարտութիւն չէ կրած եւ 14 յաղթանակէն ու 3 ոչ ոքիէն յետոյ 45 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը: Երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Պալաքիան» (16 խաղ) հետ է 4 կէտ: «Աուգսբուրգը» 11-րդն է՝ 18 կէտ:

### «Ինտերը» Խնդիրներ Չունեցաւ՝ 5:1 Միխթարեանը Մասնակցեցաւ 3 Կոլային Գրոհի

Իտալիայի առաջնութեան 20-րդ հանգրուանին առաջատար «Ինտերը» հիւրընկալեց «Մոնցալին»: Իտալացի Սիմոնէ Ինձագիլի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 5:1 հաշուով:

12-րդ վայրկեանին հանդիպման հաշիւը 11-մեթրանոցէն բացաւ «Ինտերի» թուրք կիսապաշտպան Հական Չալճանօղլուն:

14-րդ վայրկեանին Հայաստանի հաւաքականի նախկին աւագ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը տուգանային հրապարակին մէջ փոխանցում կատարեց իտալացի պաշտպան Ֆեդերիկո Դիմարկոյին, որու սուր փոխանցումը կողով աւարտեցաւ աշխարհի ախոյեան Արժենթինայի հաւաքականի յարձակող Լաուտարօ Մարտինեսը:

60-րդ վայրկեանին Հենրիխ Մխիթարեանի անցումէն եւ ֆրանսացի յարձակող Մարկուս Տիւրամի կոլային փոխանցումէն յետոյ մրցակիցի դարպասը գրաւեց թուրք կիսապաշտպան Հական Չալճանօղլուն:

69-րդ վայրկեանին դաշտի տէրերը կրճատեցին հաշուի տարբերութիւնը, սակայն 84-րդ վայրկեանին Լաուտարօ Մարտինեսը 11-մեթրանոցէն խփեց միլանեան խումբի չորրորդ կողմ:

88-րդ վայրկեանին Հենրիխ Մխիթարեանը սեփական կիսադաշտին կեցուց մրցակիցի գրոհը, սլացաւ առաջ եւ կոլային փոխանցում կատարեց ֆրանսացի յարձակող Մարկուս Տիւրամին, որ հաշիւը դարձուց 5:1:

«Ինտերը» 51 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 5 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող թուրքինի «Եուվենտուսէն», որ մէկ հանդիպում քիչ է անցկացրել: «Մոնցան» 11-րդն է՝ 25 կէտ:



### ISSF Grand Prix. Նարե Գաբրիէլեանը Նուաճած է Ոսկէ Սետալ

Նարէ Գաբրիէլեանը նուաճած է Սլովենիայի Ռուսէ քաղաքին մէջ կատարուող հրաձգութեան ISSF Grand Prix 2024 մրցաշարի յաղթողի կոչումը, կը հաղորդէ ՀՀՖ-ի մամուլի ծառայութիւնը:

10 մ. օդամղիչ ատրճանակով երիտասարդ աղջիկներու պայքարի ընթացքին Նարէ Գաբրիէլեանը 570 կէտ արդիւնքով, երկրորդ տեղէն դուրս եկած է եզրափակիչ փուլը:

Հայաստանի ներկայացուցիչը եզրափակիչին 239,7 կէտով դարձած է ոսկէ մետալակիր:

Նարէ Գաբրիէլեանը 570 կէտ արդիւնքով լրացուց նաեւ միջազգային կարգի սպորտի վարպետի նորման:



### ՊՍԺ-ն Ուժեղ էր «Լանս»-ն

Ֆրանսայի առաջնութեան 18-րդ հանգրուանին ախոյեան ՊՍԺ-ը հիւրընկալեց «Լանսին» եւ յաղթեց 2:0 հաշուով:

Մրցակիցի դարպասը գրաւեցին ֆրանսացի յարձակող Պրետլի Պարկոյան ու Կիլիան Մբալէն:

ՊՍԺ-ը 43 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 8 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Նիցայէն»: «Լանսը» 8-րդն է՝ 26 կէտ:

### Հարի Քեյնը Կրկնած է Ռոբերտ Լեւանդովսկիի Մրցանակը

Գերմանիայի ախոյեան Միլիթենի «Պալաքիայի» անգլիացի յարձակող Հարի Քեյնը «Հոֆենհայմի» դէմ Բունդեսլիգայի 17-րդ հանգրուանի խաղին (3:0) խփած կողմ շնորհիւ կրկնած է «Պալաքիայի» նախկին յարձակող, լեհ Ռոբերտ Լեւանդովսկիի («Պարսելոնա») մրցանակը Գերմանիայի առաջնութեան առաջին կէսին խփած կողմէն քանակով:

Անցած ամրան «Տոտենհեմէն» «Պալաքիա» տեղափոխուած Հարի Քեյնը Բունդեսլիգայի մէջ արդէն խփած է 22 կոլ:

Հարի Քեյնի պայմանագիրը «Պալաքիայի» հետ նախատեսուած է մինչեւ 2027թ. Յունիս: Անոր փոխանցման արժէքը կը գնահատուի 110 միլիոն եւրօ:

